Основанный в 1964 г. Комитет по культурным связям с Армянской диаспорой благодаря своей плодотворной деятельности вскоре приобрел известность в Диаспоре и установил активные связи с рядом патриотических организаций, благотворительных, культурных ассоциаций, школ, клубов, газет, с редакторами журналов, а также с теми или иными отдельно взятыми деятелями. Особенно большое внимание уделялось программам, способствующим сохранению армянской идентичности среди молодежи.

Комитет работал в направлении реализации ряда программ, призванных содействовать сохранению армянских школ в диаспоре.

В 1990-х годах, после провозглашения независимости, в эпицентре внимания Армянской диаспоры оказались вопросы, связанные с улучшением социально-экономического положения страны и реализацией программы гуманитарной помощи в условиях блокады, переживаемой республикой.

ԼԵՈՅԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
(1880–1890-ական թթ.)

ՍԱՐՈՒԽԱՆՅԱՆ Ն.

Յուրաքանչյուր սերունդ իր ազգային հիշողությունից վերցնում, ժամանակի քննական հայացքով գնահատում, վերագնահատում և ապագային է հանձնում անուններն այն արժանահիշատակների, ովքեր անդադրում տքնությամբ վաստակում են ժողովրդի հարգանքն ու սերը: Հայ ժողովրդի համար այդպիսի անուն էր Լեոն: Բավական է թերթել XIX դարավերջի և XX դարասկզբի առաջին քսանամյակի կովկասահայ թերթերն ու ամսագրերը, թռուցիկ հայացք նետել հայագիտական գրականությանը՝ համոզվելու, որ տակավին 18 տարեկանում, ռուսական նարոդնիկական միջավայրում մեծ ժողովրդականություն վայելող գերմանացի գրող Ֆ. Շպիլհագենի նշանավոր վեպի «Մեկը դաշտում զինվոր չէ» հերոս Լեոյի անունը վերցրած Առաքել Բաբախանյանը, որպես գրող, գրական քննադատ, գրահրապարակախոս, ժամանակի ճանաչված դեմքերից էր:

Լեոն (Առաքել Գրիգորի Բաբախանյան) ծնվել է 1860 թվականին, Շուշի քաղաքում և մահացել 1932 թվականին, Երևանում: 1878 թվականին նա ավարտում է Շուշվա քաղաքային վերակազմյալ դպրոցը: Այնուհետև Շուշիում և Բաքվում աշխատում է որպես նոտարական գրագիր, հեռագրիչ, «Արոր» տպարանի կառավարիչ: Լեոն 1895–1906 թթ. «Մշակ» թերթի մշտական աշխատակիցն էր: 1906–1907 թթ. նա դասավանդել է Էջմիածնի Գևորգյան ճեմարանում, այնուհետև տեղափոխվել Թիֆլիս և ամբողջովին նվիրվել գիտական աշխատանքի: 1924 թ. Լեոն հրավիրվել է Երևան և պետական համալսարանում հայագիտական տարբեր առարկաներ դասավանդել մինչև կյանքի վերջը:

Լեոն գրել սկսել է 1877 թվականից: Նրա առաջին թղթակցությունը տպագրվել է «Кавказ» թերթում, այնուհետև մի քանի տասնամյակ թղթակցել է հայ պարբերական մամուլին («Մշակ», «Արձագանք», «Արմենիա», «Մուրճ», «Հանդես ամսօրյա», «Տարազ», «Հորիզոն», «Համբավաբեր» և այլն): Նա տպագրել է հարյուրավոր քննադատական հոդվածներ, վիպակներ, պատմա-գրականագիտական ուսումնասիրություններ: Կղերապահպանողական պատմահայեցո-

դությունը հաղթահարելով՝ Լեոն կանգնում է ժամանակի առաջադեմ հայագիտության դիրքերում և հայ ժողովրդի պատմության ու մշակույթի շատ հարցեր լուսաբանում նորովի: Այս տեսակետից ուշագրավ են նրա «Հայկական տպագրություն», «Հովսեփ կաթողիկոս Արղության», «Ստեփանոս Նազարյանց», «Գրիգոր Արծրունի», «Ս. Մեսրոպ», «Հայոց հարցը», «Հայ գրքի տոնը», «Վանի թագավորությունը», «Հայոց հարցի վավերագրերը», «Անի» աշխատությունները: Լեոյի մասին մշտամնա արժեք ունեն մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանի խոսքերը. «Որպես գեղարվեստական գրող, Լեոյին անշուշտ չի կարելի դասել ռուսահայ գրականության արձակագիր կլասիկների շարքին՝ Րաֆֆիի, Պ. Պռոշյանի, Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի. սակայն իր պատվավոր տեղն ունի: Նրա վիպակներում, օրինակի համար, «Կորածները», «Պանդուխտը», «Այծարած Եղոն», «Թաթախման գիշերը» գեղեցիկ իրականացումներ են: Մանավանդ «Պանդուխտն» ու «Այծարածը» իրապաշտ ճշգրտությամբ գրված, միշտ հաճույքով կկարդացվեն: Այստեղ նրա ոճը կտրուկ է, աշխույժ և պատկերավոր, և ժողովրդական դարձվածքներով հարուստ»[1]:

Նահապետական գյուղի առօրյայից քաղված պատմվածքներում («Մնոտիապաշտության քուրմ» (1884), «Արնագին» (1890), «Այծարածը» (1904), «Մի բուռ մոխիր» (1904)) Լեոն ներկայացրել է հայ շինականի դառը ճակատագիրը և նրա ընդվզման փորձերը: «Պանդուխտ» գրվածքը, որի տակ առաջին անգամ ստորագրել է «Լ.» անունը, «Կորածներ» (1889), «Ոսկու ժխորի մեջ» և այլ երկերի նյութը հողալքումն է, արտագաղթը Ղարաբաղից ու Զանգեզուրից դեպի նավթագործների և թուրք ու պարսիկ համշարիների քաղաք Բաքու: Օտար բռնակալների դեմ հայ ժողովրդի պայքարի դրվագներ են պատկերված «Վահան Մամիկոնյան», «Սպանված հայրը», «Վերջին վերքեր», «Թաթախման գիշերը», «Լեռնեցիները» զրույցներում, «Մելիքի աղջիկը» պատմավեպում և «Վարդանանք» դրամայում: Սրանց գաղափարական առանցքը քրիստոնեական վարդապետության քննադատությունն է, համաժողովրդական պայքարի միջոցով երկրի անկախության ապահովումը: Նույն գաղափարներն են արծարծում «Ուխտավորի հիշատակարանը» (1885) և «Իմ հիշատակարանը» (1890):

Հայ դեմոկրատական մտքի մի ամբողջ շրջանի ձգտումներն են խտացված Լեոյի գրաքննադատական երկերում: Հայ գրականության հայտնի դեմքերին նվիրված դիմանկարներում (Մ. Մամուրյան, Մ. Նալբանդյան, Ս. Տյու-

[1] **Իսահակյան Ավ.,** Երկեր, հ. 4, Ե., 1959, էջ 107:

սաք, Ղ. Աղայան, Րաֆֆի, Սայաթ-Նովա), հայ, ռուս և համաշխարհային գեղարվեստական գրականության երևույթների տեսություններում, «Ռուսահայոց գրականությունը սկզբից մինչև մեր օրերը» և այլ աշխատություններում Լեոն մեկնաբանել է հայրենի գրականության հարստությունները՝ հնագույն ժամանակներից մինչև XX դարասկիզբը: Ըստ Լեոյի, գեղարվեստական գրականությունն ու գրաքննադատությունը գաղափարական զենքեր են ավատատիրական հետամնացության և բուրժուական բարքերի դեմ կռվում, ազգային-ազատագրական գաղափարների և մարդկային իրավունքների իրացման գործում:

1893 թ. պատասխանելով Յու. Վեսելովսկու հարցերին, տակավին ոչ հանրահայտ Լեոն իր կոչումն էր համարում «ժողովրդական կյանքի ցավոտ կողմերի լուսաբանությունը և իրականության այն առողջ սերմերի պարզաբանությունը, որոնց տնօրինում է առաջադիմության և մշակույթի ճանապարհը ոտք դրած ժողովրդական մասսան, և որոնք նշանավորում են ժողովրդի պատմական կյանքի լուսավոր պահերը»[2]:

Սեփական գեղագիտական հավատամքի այս համառոտ և դիպուկ գնահատականի պրակտիկ արդարացումներն են ռեալիստ գրողի մի քանի տասնյակների հասնող գեղարվեստական երկերը՝ պատմվածքներ, վիպակներ, վեպեր, դրամաներ և այլն, որոնք հրապարակ իջան XIX դարի 80-ական թվականներից մինչև XX դարի 20-ական թվականները: «Ժողովրդական կյանքի ցավոտ կողմերի» ցնցող պատկերները Լեոյի ստեղծագործության մեջ գրեթե միշտ պարուրված էին ազնիվ տառապանքի, լավատեսության, ըմբոստացման և հոգեկան գեղեցկությունների լուսավոր ճառագայթներով, որոնք էլ հենց գոյացնում էին նրա գրողական դավանանքի կենսահաստատ տարրերը: Այսօր վստահ կարելի է ասել, որ Լեոն իր հետքը թողեց հայ գրական խոսքի անդաստանում: «Ընդհանրապես Լեոյի կյանքը, - գրում է նրա գրական ժառանգությունն ուսումնասիրող Աշոտ Օհանյանը, - ժողովրդի շահերին ծառայելու վառ օրինակ է, աշխատավորական զանգվածների զարգացումը խոչընդոտող քաղաքական, սոցիալական և հոգեբանական արգելքների դեմ խիզախ պայքարի օրինակ»[3]: Եվ դա հաստատում է ինքը՝ Լեոն:

«Ինձ ղեկավարող, ինձ դրդող, ինձ հրամայողաբար առաջ մղողը, - գրել է նա, - եղել է հայ ժողովուրդը… Լինելով ժողովրդի զավակ, սնված ու մեծացած նրա տառապանքների, նրա անհուն ցավերի մեջ, ես իմ գործունեության յու-

[2] Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարան, Յուրի Վեսելովսկու արխիվ:

[3] **Լեո,** Երկերի լիակատար ժողովածու 10 հատորով, հ. 7, Ե., 1983, էջ 573:

րաքանչյուր քայլում, ամեն ժամ, ամեն րոպե նրան՝ այդ մեծ ու տարաբախտ մոր ձայնին էի ականջ դնում, նրա վեհ սրտին էի դիմում և այնտեղից ներշնչումներ ստանում»[4]:

Նման ներշնչումների արդյունք են նաև Լեոյի գեղարվեստական երկերը, որոնցում գրողն անվերապահորեն անցնում է խեղճերի, արհամարհվածների կողմը, սրանց հետ կապում «հիվանդ աշխարհի» բժշկությունը:

Իրողությունն այն է, որ XIX դարի վերջերին հայ իրականությունը սուր հակասությունների մի բարդ աշխարհ էր: Հայաստանի առավելապես արևելյան մասում ծայր էին առել սուր տեղաշարժեր, որոնք սպառնում էին գլխիվայր շուռ տալ շինականի սոցիալ-հոգեբանական դարավոր կացությունը: Նահապետական կյանքի հիմքերն էին թափանցում շուկայական հարաբերությունները, անցումային շրջանին բնորոշ նյութական և հոգևոր ճգնաժամերը ստեղծել էին խուճապի յուրահատուկ մթնոլորտ, հողալքումի և արտագաղթի ավերող վտանգներ: Դեմոկրատական մտավորականության մի զգալի մասը, որևէ լուսավոր կետ չտեսնելով դրամատիկական քաղաքում, իբրև փրկության միակ խարսխի, երեսը դարձնում էր դեպի ռամկական աշխարհի տակավին անաղարտ մնացած ակունքները: Ինչ գնով էլ լինի՝ փրկել այդ աշխարհը քայքայման և աղավաղման վտանգից, բուժել նրա կուտակված և կուտակվող վերքերը, այնուհետև այդ հիմքի վրա ձեռնամուխ լինել ժողովրդի սոցիալ-քաղաքական իդեալների իրագործմանը: Այսպիսին էին տակավին առաջին լուսավորիչներից ավանդված նոր մտավորականության ծրագրերը: Իր գեղարվեստական գործերի մի մասը Լեոն նվիրել է այդ խնդիրներին[5]:

Լեոյի հրատարակած առաջին ծավալուն գեղարվեստական գործը «Կոռածներ» գրվածքն է, որն առաջին անգամ տպագրվել է «Մուրճ» ամսագրի 1889 թ. 9–10-րդ համարներում: Նույն թվականին այն լույս է տեսնում առանձին գրքով: Վիպակի մասին գրախոսություններ տպագրեցին «Մշակ», «Արձագանք», «Նոր դար» և այլ թերթեր ու ամսագրեր: «Մուրճի» խմբագիր Ավ. Արասխանյանը Լեոյի երկը որակեց որպես «մի նոր երևույթ մեր վիպագրության մեջ»[6]:

Լեոյի գեղարվեստական ստեղծագործությունների մեջ շատ ավելի երևելի տեղ է գրավում «Մելիքի աղջիկը» վեպը, որը հրատարակվել է «Մշակ» թերթի 1897–1898 թթ. տասնյակ համարներում (առանձին գրքով լույս է տեսել 1898 և

[4] Վտակ, Թիֆլիս, 1907, N 11, էջ 163:

[5] **Լեո,** նշվ. աշխ., էջ 573:

[6] Նույն տեղում:

1905 թթ.)։ Հետաքրքրական է «Մելիքի աղջիկը» վեպի ստեղծագործական պատմությունը։ Վեպի գլխավոր հերոսուհու՝ Գայանեի մասին Ղարաբաղի ժողովուրդը հյուսել էր գեղեցիկ մի ավանդություն, ըստ որի, հայրենասեր այդ օրիորդը 1733 թ. սրախողխող է արել Ղարաբաղը նվաճած թուրք բեկերից մեկին։ Գայանեի սխրագործությունը որպես իրական փաստ է ներկայացրել Րաֆֆին[7]։

Ղարաբաղի ժողովրդի մեջ լայնորեն տարածված այս ավանդությունը ոմանք փորձել են գրի առնել, որպեսզի սերունդների հիշողության մեջ պահպանվի խիզախ հերոսուհու հայրենասիրությունը։ Գրառումներից մեկը 1880-ական թվականների երկրորդ կեսին ընկնում է Լեոյի ձեռքը, որի հիման վրա նա գրում և Մարսելի «Արմենիա» լրագրում (1887, N 79–86) տպագրում է «Հայի վրեժ» պատմվածքը։ Մեկ տասնամյակ անց, Սասունի դեպքերի տպավորության ներքո, գրողն ընդարձակում է պատմվածքի սյուժեն և ստեղծում «Մելիքի աղջիկը» խոհագեղարվեստական վեպը։ Ժամանակակիցներն ու հետևորդները բարձր գնահատական են տվել այս երկին։ Գր. Արծրունին «Մշակ» թերթում «Մելիքի աղջիկը» վեպին նվիրում է հատուկ առաջնորդող։ Կ. Պոլսի «Մասիս» թերթում գրախոսությամբ հանդես է գալիս Ա. Արփիարյանը։ Նա այդ գրվածքում տեսնում է քննադատական ռեալիզմի հիմնավորման և գործնական հեռանկարի ապացույցներից մեկը հայ գրականության մեջ։ «Պ. Առաքել Բաբախանեանը կամ Լէոն, - գրում է նա, - կոչուած է մեր գրականութեան մէջ նշանաւոր դիրք մը գրաւելու եւ ըլլալու մեր է՛ն ժողովրդական վիպասաններէն մին։ Բնութիւնն զնա օժտած է այն հատկութիւններով, որը անհրաժեշտ են վիպասան մը յառաջ բերելու համար, ունի սիրտ մը, որ խորապէս կ'զգա այն ցաւերը, որով կտառապին թշուառները»[8]։

«Գավառական հերոսներ» խորագրի տակ Լեոն «Մշակ» և «Տարազ» թերթերում տպագրել է պատմվածքների մի շարք, որտեղ երգիծահումորիստական գույներով պատկերել է գյուղաշխարհի սոցիալական և հոգեբանական դրամաները։

Լեոյի «Ազգի պահպանումը» գրվածքը առաջին անգամ տպագրվել է «Армянские беллетристы» ժողովածուի երկրորդ հատորում (М., 1894, с. 238–262)։ Հայտնի է, որ հատորի ամբողջ տպաքանակը, մի քանի օրինակներից բացի, ոչնչացվել է ցարական գրաքննության կողմից, քանզի մտավախություն էր

[7] **Րաֆֆի,** Երկերի ժողովածու 10 հատորով, հ. 10, Ե., 1959, էջ 191–192։
[8] **Լեո,** նշվ. աշխ., էջ 583։

ծնվել, որ գիրքը կարող է «սնունդ տալ համահայկական երազանքին»: Ոչնչացված հատորում տեղ էին գտել Լեոյի երեք՝ «Թաթախման գիշեր», «Տեր Մարկոս» և «Ազգի պահապանը» գործերը: Վերջինիս առիթով խմբագիրները (Յու. Վեսելովսկի, Մ. Բերբերյան) տողատակ ծանուցել էին, որ երկը մինչ այդ «ոչ մի տեղ չի տպագրվել»: Պատմվածքը հայերեն լեզվով տպագրվել է «Մշակ» թերթի 1896 թ. N 17–21 և 23 համարներում: Կան որոշ ոչ էական տարբերություններ ռուսերեն և հայերեն տարբերակների միջև:

Լեոյի գրական ստեղծագործություններում ցույց է տրված, որ Հայաստանի արևելյան հատվածը XIX դարի վերջերին սուր հակասությունների մի բարդ աշխարհ էր, ուր նահապետական խավարի ամոթխած խորքերն էին թափանցում կապիտալիստական հարաբերությունները, և անցումային շրջանին բնորոշ նյութական ու հոգևոր ճգնաժամերը ստեղծել էին յուրահատուկ խուճապի մի գործընթաց՝ հողալքումի և ազգային հատկանիշների համահարթեցման լուրջ վտանգներով: Իր գեղարվեստական գործերի գրեթե մեծ մասը Լեոն նվիրեց այդ հարցերին: Եվ դա զարմանալի չէ: Աղետալի չափերի հասած «խաղաղ» պանդխտության, դատարկվող հայ գյուղաշխարհի թեման տագնապներ և բուռն վեճեր էր հարուցում ամենուրեք, այդ թվում՝ մամուլում և հասարակական հավաքույթներում: Կար ծայրահեղ միամիտ մի տեսակետ, ըստ որի, գյուղացին քաղաք է մեկնում՝ մղված «շուտով փող վաստակելու անհագ ցանկությունից»[9]: Նման կարծիքը լիովին հնարավոր էր համարում աղետի առաջն առնելը և համոզումի ողջ զինանոցը գործի էր դնում, որպեսզի ապահովվի «մոլորվածների» դարձը ամենափրկիչ հողի գիրկը: Առաջին պատմվածքներում Լեոն թեև հրաժարվում է ունեզուրկ գյուղացիների զանգվածային չվերթը դեպի քաղաք դիտել որպես գրգռված ախորժակների հետևանք, սակայն դրանց մեջ դժվար չէ նկատել մոլորանքի պարագան և գրողական նախատինքն ու կշտամբանքը մոլորվածների հասցեին: Գրող արձակագրի վարպետությամբ «Պանդուխտ» պատմվածքում Լեոն ցույց տվեց Շուշի քաղաքի և ամբողջ Ղարաբաղի բնակչության ընչազրկության և դրա հետևանք հանդիսացող զանգվածային արտագաղթի այն գործընթացը, որ մեծ ծավալ ընդունեց հատկապես XX դարասկզբին: Միագիծ սյուժետային կառույցների զարգացումը հուշում է անհնարին կացություն, իսկ ավարտի մեջ երևան է գալիս բարոյական ծանր կորուստներ կրած և իր ակնկալությունները քամուն տված պանդուխտի անամոք վիշտը, զղջումն ու ինքնածաղկումը: Ինչ էլ որ լինի, տո-

[9] Մշակ, Թիֆլիս, 1887, N 121:

ղերի արանքից անընդհատ լսվում է գրող Լեոյի խրատական ձայնը՝ նստիր քո տանը, քո հողի վրա, էլի լավը դա է, քանզի արհեստավորների և այլևայլ զբաղմունքի տեր բանվորների մեծ պահանջ ունեցող երբեմնի քաղաքն այժմ դարձել է կատաղի բնազդների, ավելորդ մարդկանց, գործ որոնողների մի օջախ, անտեր-անտիրական մարդկանց համար բազում փորձանքներ թաքցրած մի դժոխք, մինչդեռ գյուղաշխարհը դեռ պահպանում է վաղ ժամանակների փոխօգնության բեկորները, միմյանց ճակատագրի հանդեպ շինականների սրտառուչ հոգածության մղումները: Արիստակեսը, Սարգիսը, Ծեր Մարկոսը բուրժուական քաղաքի դժնդակ հարվածների տակ հոգեկան անբուժելի վերքեր են ստանում, անիծում գյուղից հեռանալու սև օրը: Պանդուխտ Սարգիսը վերադառնում է ծննդավայր՝ Շուշի և տեսնում, որ կինը մուրացկան է դարձել: Ահա ինչ է պատմում նա. «Շուշի մտա կիրակի օրը, կեսօրից հետո: Ամառն էր, եղանակը հով, սիրուն: Մարդ, կնիկ, տղա, աղջիկ դուրս թափած գնում էին ման գալու: Կարծես բանտից էի ազատվել: Այնքա՜ն ուրախացա, սկսեցի համարյա վազել: Հայոց հրապարակից բարձրացա, փոստի փողոցովն անցնում էի, տունը մոտիկացել էր: Այդ փողոցում սալ քարի վրա նստած էր սպիտակ չադրայի մեջ փաթաթված մի կին: Ողորմություն էր խնդրում: Գլուխը գցել էր գոգը, որ մարդ չտեսնե. ձեռքի կեսը դուրս էր բերել, բաց արել. ամեն մի ոտի ձայն լսելիս ցածր ձայն էր հանում: Շատերը չէին նայում, անցնում էին: Ես ձեռքս գրպանս տարա, որ ողորմություն տամ, մանր փող չկար: Լավ, ասացի, հետո կտամ: Եվ էլի վազեցի: Հենց ինչպես հիվանդությանս ժամանակ տեսել էի, այնպես էլ եղավ: Երեխաները կպան ինձնից: Նրանց համար նոր էի աշխարհ եկել: Մարմինս փշաքաղվեց, երբ տեսա նրանց այնպես տկլոր: Կինս տանը չէր: Հարցնում եմ, թե ու՞ր է, լաց են լինում: Ես էլ լաց եղա. աստվա՜ծ, անբախտություն չլինի պատահած: Բայց Սիմոնն ինձ հանգստացրեց, ասելով.

– Միշտ մթնած ժամանակ է գալիս:

Վերջապես մթնեց: Կնիկս սպիտակ չադրան շուռ կալած եկավ: Ասեցինք, խոսեցինք: Ի՜նչ իմացա… փողոցում նստած մուրացկանը իմ կնիկն է եղել…»[10]:

Ժամանակի հեղինակավոր քննադատներից ոմանք 1889 թ. հրատարակված «Կորածներ» վիպակը բնութագրեցին որպես նատուրալիզմի առաջին լուրջ փորձը հայ գրականության մեջ՝ կառուցված բարոյական մեղանչումների հենքի վրա: Սեփական մարմինները վաճառքի հանած Աննան, Մաշան, Հերիքնազը, կաղ մուրացկան Բարսեղը, Աննայի անչափահաս դուստր Սառան,

[10] **Լեո,** նշվ. աշխ., էջ 449:

ջադու պառավ Բաբուշկան և մյուսները քաղաքային կյանքի արտաքին անդորրը մթագնող հերոսներ են, որոնց ակամա ջանքերով գրվում են իրականության գրքի մռայլ էջերը: Այդ մարդիկ սակայն այլ ընտրություն չունեին: Իր հերոսների հոգեկան աշխարհները բացելով՝ Լեոն այնտեղ հայտնաբերում է արդար մղումների հարուստ պաշարներ՝ նվիրվածություն օջախի սրբազան գաղափարին, աշխատասիրություն, չարիքին դիմակայելու կամք և այլն: Մինչդեռ ողբերգական հանգամանքների շղթայական հետևանքները և նրա անխուսափելի ուղեկից դաժան աղքատությունը ամենաhետին պլան են մղում բարոյական հնավանդ սկզբունքները, մարդու կամքը զրկում հենարանից, հերոսներին նետում անկման խորխորատը: «Անմեղ մեղավորների» թեման հիմնավորվում է գեղարվեստական թարմ իրավիճակների մեջ, գրական գործընթացը հարստանում է «կորած մարդկանց» ճակատագրերի նոր մեկնաբանությամբ, մերժում մեղանչումների ժառանգորդական կենսաբանական հիմունքները և կարևորում դրանց բացառապես սոցիալական ազդակները: «Գյուղի մարդիկ» շարքի «Հողից կտրվածներ» («Ոսկու ժխորի մեջ») վիպակը՝ լավագույնը սոցիալական խնդիրներ արծարծող Լեոյի երկերից և քննադատական ռեալիզմի ամենազորեղ դրսևորումներից մեկը հայ գրականության մեջ, ծանոթ թեմայի վրա նետված մի նոր, առավել սթափ հայացքի առհավատչյան էր: Հեռավոր ակնարկ անգամ այստեղ չկա «հողից կտրվածների» ո՛չ խոտորման, ո՛չ էլ առավել ևս զղջման մասին: Գրողն իր հերոսների համար ստեղծում է այնպիսի վիճակներ, որոնք նրանց հոգեբանորեն օտարում են և՛ քաղաքից, և՛ գյուղից: «Հողից կտրվածներ» խորագիրն ընդլայնում է նախկին իմաստը և հուշում ոչ միայն մայր հողից նրա որդիների անջատման փաստը: Լեոյի հերոսների համար ըստ էության փակ են փրկության հույսի բոլոր բարեպատեհ դռները: Գյուղական հարազատ երկրի կարոտը ևս բզկտում է վիպակի գլխավոր հերոս դռնապան Հակոբի ներաշխարհը. այնտեղ են անցել նրա մանկությունն ու պատանեկությունը, այնտեղ են անջատման քաղցած օրերը հաշվում նրա կինը, որդին, դուստրերը: Սակայն այդ կարոտն անբաժան է տագնապներից, և ամեն անգամ նրա խռովահույզ հոգին փախուստի ելք է որոնում արդյունաբերական Բաքվի հոշոտող ճիրաններից: Այն միջավայրը, որ տարիներ առաջ կարիքը նետեց նախկին ժրաջան հողագործին, խտացնում է կապիտալիստական քաղաքի գրեթե բոլոր զարհուրանքները: Դա մեծ քաղաքի աղքատանոցն է՝ դրամական այլասիրության հոգեզավակը, որտեղ իրար դեմ մրցության են ելել խաբեությունն ու արկածախնդրությունը, մահվան դուռը հասած խնամյալների քողարկված նողկանքն ու ցուցադրաբար

նրանց նետված գոյության միջոցների թաքուն կողոպուտը: Այդ բոլորը, դրանց հետ նաև այլ բազմաթիվ քստմնելի արարքներ, կատարվում են Հակոբի աչքի առաջ, և երբեմնի շինականի հոգին խռովվում է աշխարհի բաների շուրջ մտորելիս: Նախապես լսելով հարուստների կյանքի մասին հեքիաթային պատմություններ, Հակոբի մտապատկերում անհասանելի այդ աշխարհը նույնանում է դրախտի առասպելի հետ, և այն փաստից, որ ինքը հաղորդակցվում է նորաթուխ «մարդ-աստվածներին», խոսում նրանց հետ,ականատես լինում նրանց միջոցներով որոշակի մարդկանց ազատագրմանը մահվան մագիլներից, միամիտ պանդուխտի սիրտը լցվում է երախտագիտությամբ, և նրա զգացմունքային հոգին ինքնաբերաբար արտաբերում է քրիստոնյա աշխարհի հնօրյա վսեմ պատգամներից մեկը՝ «Ադամի որդիներ ենք…»: Սակայն աստիճանաբար նրա ուղեղին է հասնում ուրիշ ճշմարտություն՝ արյան թշնամություն կա Ադամի որդիների միջև, որովհետև միլիոնատեր Սամվել Նուրյանի դասակարգը կռում-կոփում է իր նմանների դժբախտությունը: Հետադարձ հայացք նետելով հայ գրականության ստեղծած կերպարների վրա, Լեոն շեշտում էր, որ Գ. Սունդուկյանից առաջ «հասարակ ժողովուրդ շատ քիչ էր երևում մեր գրականության մեջ. հայ ասելով հասկացվում էր գլխավորապես վաճառականը, աղան, ազդեցիկ պաշտոնյան: Բայց դրանք ոչ միայն ժողովուրդ չէին, այլ այդ ժողովրդի թշնամին էին»[11]:

Ժամանակի իրականության նկատմամբ Լեոյի միանգամայն որոշակի վերաբերմունքն արտահայտվել է նույնիսկ քաղաքի համայնապատկերն ուրվագծելիս: Ապականության և կեղտի տիրապետություն, բնության կանաչ պարգևից զուրկ, դիվական ուժով բղավող շչակների տագնապազդու հրավեր և զգուշացում, բանականության ձայնը խլացնող երկաթի որոտմունք և այդ բոլորի հենքի վրա՝ մահվան տրոփյուն աղքատանոցի պատերից ներս, փողոցներում վխտացող գործազուրկների, մուրացկանների, հետնամուտքերի մարդկանց տվայտանքներ: Բարոյական այդ հավատաքննության գնահատությունը Լեոն իրականացնում է գեղարվեստական այլևայլ միջոցներով, այդ թվում աշխատող մարդու նախնականորեն անաղարտ, միամիտ պատկերացումների հյուսվածքներից հորդացող անկողմնակալության և արդարամտության չափանիշներով: Անողորմ քաղաքի դիմապատկերի իր նկարագրությամբ Լեոն իր ներդրումն արեց ազգային գեղարվեստական խոսքի անդաստանում: Հայ ընթերցողը սեփական գրականության միջոցով քաջատեղյակ էր ոսկու տենդով

[11] **Լեո,** Ռուսահայ գրականությունը սկզբից մինչև մեր օրերը, Վենետիկ, 1904, էջ 337:

բռնկված արդյունաբերական աշխարհի գիշատչական բնազդներին, կեղեքումներին, բարոյական բազմազան կորուստներին, դեմոկրատական շերտերի թշվառությանն ու բարձր առաքինությանը: Ընդարձակելով այդ համայնապատկերի սահմանները, հարստացնելով այն այլևայլ տիպական հատկանիշներով, Լեոն երևան է հանում դարաշրջանի թերևս ամենասարսափելի կերպարը՝ խեղանդամ բանվորին: Մերժված անհատի և «մնացյալ աշխարհի» հակամարտությունը ի դեմս այդ կերպարի, գտնում է իր նոր, առավել ցնցող արտահայտություններից մեկը: Գրող Լեոյի գրիչն ընդհանրապես առանձին թափ է ստանում հատակի մարդկանց կյանքը նկարագրելիս: Նա, որ մանկապատանեկան տարիներին մինչև մրուրը խմել էր մարդկային արժանապատվությունը ստորացնող աղքատության դառը բաժակը, ականատես եղել ամենուրեք ալիք տվող ընչազրկության սարսափներին, և նրա զգայուն ոգին ընդվզել էր այդ անարդարությունների դեմ: Կենսափորձի չուրախացնող պատկերները հետագայում դարձան գրողի համար հրապարակախոսական փաստարկներ և գեղարվեստական կենդանի կերպարներ, որոնց միջոցով նա իր զայրույթի և դատապարտության խոսքերն էր ձևակերպում «զզվելի հրեշի»՝ ժամանակի մարդատյաց հասարակարգի դեմ:

Լեոյի գեղարվեստական հետաքրքրությունը պատմության նկատմամբ արթնանում է 1880-ական թվականների կեսերից: Նրա ուշադրությունն առանձնապես սևեռվում է պատմության փաստերի բանահյուսական արձագանքների վրա: Հայոց նախնիների ժամանակներին վերաբերող նրա ավելի քան երկու տասնյակ երկերից թերևս միայն «Վարդանանք» դրաման է բարձրանում ստույգ պատմական իրադարձությունների հենքի վրա, եթե, հարկավ, նկատի չունենանք կիսագեղարվեստական-կիսապատմական այն գործերը, որտեղ հանրամատչելի, պատկերավոր լեզվով, դեպքերի «բելետրիստական» ջերմ շարադրանքով, դիմելով նաև երկխոսությունների և մենախոսությունների, պատմաբան գրողը քարոզում էր ազգային պատմության արժանահիշատակ դարձերն ու ականավոր անհատների սխրագործությունները: Մյուս ստեղծագործությունների, այդ թվում և «Մելիքի աղջիկը» վեպի համար ատաղձ են ծառայել ժողովրդական ավանդույթները: Լեոն, ըստ որում, մի կողմ է դնում վերջիններիս երևակայական շերտերն ու պայմանական արտահայտչաձևերը և օգտագործում դրանց իրապատում միջուկը: Իսկ դա որոշակի նկատառումների արդյունք էր. երբ խոսքը վերաբերում էր «մաքուր» պատմագեղարվեստական երկերին, Լեոն պարտադիր էր համարում հավատարմությունն ականավոր անհատների կյանքի և գործի գլխավոր ուղղությանը, հա-

վաստի վավերագրերի ոգուն, քանզի խորապես համոզված էր, թե քննադատական ռեալիզմի գրական երկը գաղափարական խնդիրներ կարող է արծարծել ճանաչողական հիմքի վրա, ուստի դրա արդիական հնչեղության առաջին նախապայմանը պատմական ճշմարտացիությունն է: Դիմելով առավել դյուրաթեք և ստուգության տեսակետից նվազ պահանջկոտ պատմաավանդական ժանրին, Լեոն ճշմարտացիության է հասնում պատմության ոգու և տրամաբանության հավաստի արտացոլմամբ, բայց և միաժամանակ ավելի անմիջական ու շոշափելի դարձնում ժամանակների կապերը, անցյալի բարոյախիմաստասիրական դասերը: Ի վերջո, ավանդույթների մեջ խոսում էր բացառապես ժողովրդական առողջ աշխարհայեցողությունը, իսկ դա Լեոյի համար թանկ էր բոլոր արժեքներից: Պատմաավանդական «Մելիքի աղջիկը» վեպում արտացոլված է 1730-ական թվականների Հայաստանի քաղաքական կացությունը: Իրադարձությունները, ճիշտ է, ծավալվում են Հայաստանի մի գավառում միայն՝ Ղարաբաղում, սակայն պատմական կյանքի վիպական տեսությունների միջոցով հեղինակը վերակենդանացնում է նախորդ երեսնամյակի քաղաքական կացությունը և ապա, ըստ պատշաճի, «լուրեր տալիս» երկրի ուրիշ շրջանների վերաբերյալ, ստեղծում համանման վիճակների տպավորություն: Բնականաբար, մոռացության չեն տրված նաև հարևան խոշոր պետությունների փոխհարաբերություններն ու պետական կյանքի ներքին տեղաշարժերը, որոնց ընթացքը որոշակի կշիռ ուներ Հայաստանի պատմական բախտի հեռանկարը կանխորոշող նախադրյալների համակարգում: Որոշակի, բայց ոչ վճռական, որովհետև Լեոն իրեն հաշիվ էր տալիս, որ յուրաքանչյուր ժողովուրդ ամենից առաջ ինքն է ստեղծում իր պատմությունը և չի կարող ամբողջապես տրվել արտաքին հանգամանքների ու օտար կամքի քմահաճ խաղերին:

Ընդհանուր այս պատմահայեցողությունը տոն է տալիս նախնիների կյանքը պատկերող նրա երկի գեղարվեստական տրամադրությանը: Ընտրված ժամանակաշրջանը, որտեղ հատկապես ողբերգականորեն են հնչում վավերագրերի օրհասական ճիչերը, գեղագիտական իմաստով պարարտ հող է, որտեղ գրողը հետևողականորեն ու խնամքով աճեցնում է իր պատմական լավատեսության սերմերը:

«Մելիքի աղջիկը» վեպի մեջ բացակայում է հայ պատմագեղարվեստական երկերում մեծ տեղ գրավող դավաճանի կերպարը, եթե նկատի չունենանք անչափահաս Շահնազարի մանր-մունր մատնությունները, որ հեղինակի գրչի տակ են հայտնվել թշնամու ստորությունները մի նոր կողմից ընդգծելու,

այլ ոչ թե դեպքերի ուղղության վրա դրանց ճակատագրական անդրադարձը շեշտելու համար: Բռնությունը ներթափանցել է հայոց աշխարհը, և նրա բազուկը ոլորելու, հայրենիքի ազատ ապագան երաշխավորելու իրական զորություն գրողը որոնում ու գտնում է հենց ժողովրդի ընդերքում: Լեոյի համար դա էլ դառնում է երկրի ներքին ուժերի գնահատության չափանիշը:

Նույնիսկ ազատագրական կռվի մարտիկը, ինչ դասի էլ որ նա պատկանի, եթե չունի նման գիտակցություն, ի սկզբանե կրում է պատմական դատապարտվածության խարանը: Նվաճողների և նվաճվածների միջև ծավալվող հակամարտությունը վիպական կոնֆլիկտի, այսպես ասած, բնական հոսքն է: Ելակետայինը Լեոյի պատմագեղարվեստական բոլոր գործերում, որը և ցուցադրում է նրա պատմաիմաստասիրական առավելությունները, ժողովրդաազատագրական պայքարի սկզբունքն է: Դա պատմության մեջ ժողովրդի դերի ըմբռնման շարունակությունն է, ըմբռնում, որ Լեոն սփռել է ընդհանրապես իր հոգևոր ժառանգության բոլոր գործերում՝ քննարկելով ժողովրդական ներդրումի բոլոր հնարավոր արտահայտությունները: Այստեղից էլ հատկապես «Մելիքի աղջիկը» վեպի մեջ, և հեղինակի բոլոր պատմագեղարվեստական երկերում մշտապես բաբախող սոցիալ-դասային երակը:

Ըստ Լեոյի «արյուն՝ արյան դիմաց» կարգախոսն ունի իր համոզված հակառակորդները, և դրանք առաջին հերթին եկեղեցական-հոգևորականներ են: Ինչու՞ էր Լեոն իր ստեղծագործություններում այդքան հաճախակի օգտագործում սույն չարաբաստիկ խնդիրը՝ չերկնչելով կրկնություններից, ստանդարտ իրավիճակներից, հրապարակախոսական կրքից, միտումնավոր չափազանցումներից: Հոգևորականության քննադատությունն ակնբախ էր տակավին XVII–XVIII դարերում, սակայն իրավացի էր Լեոն, երբ ընդգծում էր, թե հայ ժողովուրդը մանավանդ «թուրքահայերի արյունոտ դատի վրա է սովորել, որ հոգևորականությունը թշնամի է ազատության, առաջադիմության»[12]:

«Մելիքի աղջիկը» վեպի հակակղերական գիծը նրա հավասարազոր հյուսվածքներից մեկն է և նպատակ ունի զանգվածների աչքին հեղինակազրկել և վնասազերծել ազատագրական պայքարի այդ վտանգավոր ներքին հակառակորդին: «Մելիքի աղջիկը» վեպի մեջ քույր Հեղինեն խտացնում է իր մեջ եկեղեցական դոգմաների ամբողջ խոցելի հատկանիշները, ըստ որում, Լեոն հավասար հարթության վրա է դնում հոգևորականության քաղաքական և սոցիալական վարքագիծը: «Ինչո՞վ են լավ այս տանու առյուծները դրսի վայրենի

[12] Մշակ, 1905, N 243:

իսկական առյուծներից, - դառնորեն մտորում է Գայանեն, - ... միևնույն են դրսիները և ներսիները, ամենքը մի անուն ունեն՝ բռնակալ»[13]:

«Մելիքի աղջիկը» վեպում Լեոն կերտել է վառ կերպարների մի ամբողջ շարք, որոնց միջոցով արտացոլել է հասարակական տրամադրությունների բարդ համայնապատկերը: Ի դեմս փաշա Սարը Մուստաֆայի, Սուլեյման բեկի, Քյոսա Մուխտարի և այլոց՝ պատկերելով օտարերկրյա լծի ճնշումները Հայաստանում, Լեո գրողը հմտորեն տարբերակում է հայրենի երկրի դասային կառուցվածքի շերտերը, ընտրում բնորոշ կերպարներ, նրանց օժտում համապատասխան հոգեբանությամբ և վարքագծով: Երեսանց հավատարմություն ցուցաբերելով թուրք նվաճողներին, Ղարաբաղի փառապանծ մելիքների շառավիղ Ավանը վանդակի մեջ նետված վագրի նման պատեպատ է խփվում, ելք որոնում հոգեվարք ապրող հայրենիքի համար, գաղտնապես ի մի հավաքում ոգու կորովը պահպանած մարտիկներին և իջեցնում վճռական հարվածը: Ավանի քույրը՝ Աննա-Խաթունը, ստանձնելով հանգուցյալ ամուսնու իշխանությունը, կանգնում է անձնական և հասարակական ողբերգության փաստի առաջ, և կանացի նրա խառնվածքը երբեմն խանգարում է պահպանել հոգու հավասարակշռությունը արհավիրքների տակնուվրայություններում: Ի վերջո Վարանդայի իշխանուհու մեջ հաղթում են ամուսնու ազատասիրական պատգամները, և նա էլ սուրը ձեռքին ելնում է թշնամիների դեմ: Հասարակ ժողովրդի ներկայացուցիչներ են Փերին, Նազլուն, Մեհրին, որոնց անագորույն ճակատագիրը սնում է նաև նրանց դասային ատելությունը: Լեոն ավելի հանգամանալից է հայրենի անտառապատ լեռները քաշված և այնտեղից նվաճողներին պարբերաբար խոցոտող ժողովրդական վրիժառու Մանասի և նրա ընկերների կերպարները կերտելիս: Գրողը մի ամբողջ բանավեճ է բացում Մանասի և նրանց միջև, ովքեր անհեռանկար և վտանգավոր են համարում այսպես կոչված «մանր» կռիվները: «Ծմակի մարդը», որի մեջ Լեոն մարմնավորել է ժողովրդի իմաստասիրությունը, արժանի պատասխան է տալիս ընդդիմախոսներին: Մանասի քաջերը կռվում են ինչպես օտար նվաճողների, այնպես էլ ստեղծված կացության հետ հաշտվելու կործանարար հաշիշի դեմ:

Լեո գրողի ստեղծած լավագույն հերոսուհիներից մեկն է Գայանեն: Հեղինակը համոզիչ ուրվածերով պատկերել է կերպարի հոգեբանական հասունացումը: Ռոմանտիկ սիրո ոգևորությունը, ծածուկ հաղորդակցումները դրսի աշխարհի հետ, որոնցից ցնցվում է կուսական նրա հոգին, դառը հիասթափութ-

[13] **Լեո,** նշվ. աշխ., էջ 578:

յունը սիրած տղայից, սանձարձակ թուրք բեկի նկրտումներն իր նկատմամբ այն զսպանակներն են, որոնք նախապատրաստում են Գայանեին հայրենասիրական խիզախության:

Լեոն V դարի հոչակավոր իրադարձություններին մի նոր իմաստավորում է թելադրում «Վարդանանք» դրամայում: Վարդան Մամիկոնյան – Վասակ Սյունի հակամարտության մեջ գրողը նկատում է մեկ այլ շարժառիթ: Հայ գրի և գրականության ռահվիրաները, որպես ազգային փրկության միակ միջոց, Հայաստանում ստեղծել են դպրոցների ցանց, որտեղ սովորում էին նաև շինականների զավակները: Վարդանանց կողմը ապավինում է հողագործ հային, սուր տալիս նրա ձեռքը: Վասակը սարսափում է այդ բոլորից, նրա դասակարգային բնազդը կռահում է վերահաս վտանգը: Վարդանն իր կողմնակիցներով վեր են բարձրանում դասապաշտական անձուկ շահերից, քանի որ նժարի վրա դրված է հայրենիքի բախտը, և նրանք հոչակում են անողորմ կռիվ դավաճանների, դասալիքների դեմ: XIX դարավերջի և XX դարասկզբի համար միանգամայն արդիական էր հնչում դրամայի հերոսի փառաբանությունը արդարության սրի հասցեին, որ «նվաճողական գործիք չէ, ուրիշներին ստրկացնելու համար չէ: Թող ամենքն ապրեն, ինչպես ուզում են, մենք մեզ համար մի անկյուն ապահովենք՝ ապրելու և աշխատելու համար»[14]: Նկատենք, որ այս տողերի մեջ ինքն իրեն հավատարիմ Լեոն է՝ զանգվածների արարչագործ ներուժը պաշտամունքի աստիճանի բարձրացրած դեմոկրատը:

Մարդկության ստեղծած հոգևոր արժեքների կենսունակության քննությունը հարատև գործընթաց է փոփոխվող ժամանակների մեջ: Լեոյի գեղարվեստական ստեղծագործության լավագույն մասը դիմանում է այդ քննությանը:

LEO'S LITERARY HERITAGE (1880–1890 ss.)

SARUKHANYAN N.

Summary

The famous Armenian historian Leo, among other things, was also the author of quite a number of literary and literary critical works. His stories and novels

[14] **Լեո,** նշվ. աշխ., էջ 579:

about the patriarchal life of the Armenian village show the terrible conditions of peasants' life. The main subjects of Leo's literary works were the degradation of the Armenian village and its result – "voluntary" migration.

Leo's literature and reviews are an indivisible part of the Armenian Democratic thought.

ЛИТЕРАТУРНОЕ НАСЛЕДИЕ ЛЕО (1880–1890-х гг.)

САРУХАНЯН Н.

Резюме

Известный армянский историк Лео является автором многих литературных произведений и литературоведческих исследований. В рассказах о патриархальном укладе жизни деревни Лео описал тяжелое положение армянского крестьянства. Основной темой литературных произведений Лео стала проблема деградации сельской жизни, породившая «добровольную» эмиграцию.

Литературно-критические труды Лео отражают чаяния и устремления армянской демократической мысли.

ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ (1881-1909 թթ.)

ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ Վ.
vardan.hambardzumyan@gmail.com

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի 2015 թ. հունվարի 29-ին ընդունած Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի համահայկական հռչակագրի 4-րդ կետով ողջ հայության անունից երախտագիտություն է հայտնվում այն ազգերին, կառույցներին և անհատներին, ովքեր հաճախ իրենց վտանգելով՝ մարդասիրական տարաբնույթ օգնություն ցուցաբերեցին աղետի ենթարկված հայ բեկորներին: Նրանք փրկեցին լիակատար ոչնչացման վտանգի առջև կանգնած բազմաթիվ մարդկանց, ապահով և խաղաղ պայմաններ ստեղծեցին նրանց համար՝ մեծ թափ հաղորդելով որբախնամ գործունեությանը և միջազգային հայասիրական շարժմանը[1]: Դրանց թվում էին XIX դարի վերջին ու XX դարի սկզբին Օսմանյան կայսրությունում գործող եվրոպական և ամերիկյան միսիոներներն ու նրանց հաստատությունները, որոնցից մեկը Երիտասարդաց Քրիստոնեական Ընկերակցությունն (ԵՔԸ)[2] էր:

Միսիոներների գործունեության նկատմամբ ժամանակի հայ հասարակական-քաղաքական գործիչների վերաբերմունքը հաճախ քննադատական է եղել: Հատկանշական են միսիոներական կառույցներում երկար ժամանակ առանցքային պաշտոններ զբաղեցրած Վարազդատ Տերոյանի գնահատականները՝ «համաշխարհային իմպերիալիզմի ծիծեռնակներից» մինչև «արևմուտքի ազդեցության գործակալներ» բնութագրերով[3]: Արդարացիորեն դրական չի եղել նաև Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու վերաբերմունքը

[1] http://armeniangenocide100.org
[2] Young Men's Christian Association (YMCA).
[3] **Տերոյան Վ.,** Միսիոներաբարեգործական կազմակերպությունների աշխատանքը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում, առաջաբանը և ծանոթությունները Ռուբեն Սահակյանի, Ե., 2005, էջ 25:

և այդ՝ միսիոներների իրականացրած հոգեորսության պատճառով: Միսիոներները, անկասկած, հանդես էին գալիս իրենց պետությունների քաղաքական, տնտեսական ու մշակութային շահերի պաշտպանության դիրքերից:

Պետք չէ մոռանալ, որ բազմաթիվ եվրոպացիների և ամերիկացիների համար Հայաստանն իրենից ուրույն քաղաքակրթական արժեք էր ներկայացնում, իսկ հայ ժողովրդի գոյապայքարը՝ քրիստոնեական համերաշխության, մարդկային բարոյականության ու կարեկցանքի մարտահրավեր: Քիչ չեն փաստերը, որ հենց բարոյական, այլ ոչ թե նյութական շահերով առաջնորդվելով, մարդիկ իրենց կյանքն էին վտանգում, իսկ երբեմն զոհաբերում, հայերին նախ համիդյան, իսկ հետո երիտթուրքական ու քեմալական հոշոտումից փրկելու համար: Այդ նահատակներից էին Օտարերկյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհրդի[4] միսիոներներ Դեյվիդ Ռոջերզը և Հենրի Մորերը, որոնք 1909 թ. ապրիլի 15-ին սպանվեցին Ադանայի ջարդերի ժամանակ[5], ամերիկյան ԵՔԸ աշխատակիցներ Ջեյմս Փերրին ու Ֆրանք Ջոնսոնը, որոնք 1920 թ. փետրվարի 1-ին սպանվեցին քեմալականների կողմից Այնթապի մոտ[6]:

1897 թ. մայիսի 17-ին միսիոներների որբախնամ նախաձեռնություններից անհանգստացած՝ Կ.Պոլսի պատրիարք Մատթեոս Իզմիրլյանին ուղղված նամակում կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը գրում է. *«Շատ բնական է որ այդպէս լինի, զի փողոցնէրու մեջ անտէրունչ մնացած որբէրը, իրաւունք ունին ժողուել այդ մարդասէրնէր երբ մէր մարդասէրնէր պակասում և կամ կարող չէն այդչափ ահագին զոհողութիւն անէլ: Վերցուցէք այժմ կրօնի խնդիրնէր, զի այժմ ոգեպահիկ հացի խնդիրն է յաղթանակող, ես խիստ դատապարտ կը փէնէմ քննադատ մարդոց տրտունջնէր»*[7]: Համիդյան ջարդերի օրերին միայն Կ.Պոլսում շուրջ 40 հազար որբացած հայ մանուկներ կային[8]:

---

[4] American Board of Commissioners for Foreign Missions (ABCFM).

[5] **Սիմոնյան Հ.,** Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ), Ե., 2009, էջ 372–376: Տես նաև՝ **Համբարձումյան Վ.,** Բրիտանական կայսրության փոխհյուպատոսի ժամանակավոր պաշտոնակատար Լոուսն Չեմբրսը 1909 թ. Ադանայի ջարդերի մասին (ՀՀ ԳԱԱ Լրաբեր հասարակական գիտությունների, թիվ 1(643), 2015, էջ 157, 162):

[6] **Detroit Young Men,** Volume XVII, no. 28 (Detroit, February 19, 1920).

[7] Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան (այսուհետև՝ ԳԱԹ), Մ. Խրիմյան ֆոնդ, գործ 26, I-բ: Տես նաև՝ **Կոստանդյան Է.,** Մկրտիչ Խրիմյան. հասարակական-քաղաքական գործունեությունը, Ե., 2008, էջ 385–386:

[8] **Կոստանդյան Է.,** նշվ. աշխ., էջ 385:

ԵՔԸ-ն «Եվրոպայի հիվանդի» մարմնին սերտաճած միսիոներական շարժման մասը և տարատեսակն էր: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ԵՔԸ-ն այլևս աշխարհի ամենամեծ հասարակական նախաձեռնություններից մեկն էր, որն ըստ ԱՄՆ նախագահի Ուիլյամ Հ. Թաֆթի բնութագրման. *«...Պատերազմների համամարդկային պատմության ընթացքում աննախադեպ արդյունքների հասավ իր խաղաղասիրական գործունեությամբ»[9]:*

Ուշագրավ է, որ ԵՔԸ-ն Օսմանյան կայսրություն ներթափանցեց շատ ավելի վաղ, քան կաթոլիկ կամ ուղղափառ երկրներ: Արդեն 1881 թ. Լոնդոնում կայացած ԵՔԸ համաշխարհային համագումարում Օսմանյան կայսրությունը ներկայացված էր պատվիրակությամբ[10]: Սկզբնական շրջանում այն գործում էր կայսրությունում արդեն հաստատված եվրոպացի և ամերիկացի միսիոներների կողմից հիմնած քոլեջների[11] և այլ ուսումնական հաստատությունների միջոցով, որտեղ սովորելու մեծ ձգտում ունեին հատկապես հայ երիտասարդները: XIX դարի վերջին Օսմանյան կայսրությունում հայկական ազգային-կրթական հաստատությունները սակավաթիվ էին՝ հիմնականում ֆինանսական միջոցներից զուրկ ու կրթության ցածր որակով: Հակառակը՝ օտարերկրյա կրթական հաստատություններն ունեին կայուն ֆինանսավորման աղբյուրներ, ավելի որակյալ կրթական ծրագրեր: Ավելին՝ ամերիկյան կամ եվրոպական կրթարաններում ուսում ստացած որոշ հայ երիտասարդներ իրենց կապերն ու գիտելիքներն օգտագործում էին Արևմուտքում հաստատվելու համար: Միայն ամերիկյան բարեգործական կազմակերպությունների կողմից Օսմանյան կայսրությունում հիմնվել էին 551 տարրական և միջնակարգ դպրոց և ութ քոլեջ[12]: Հենց այս քոլեջների ուսանողների շրջանակներում էլ ձևավորվեցին ԵՔԸ

---

[9] **Taft W.H.** (Chairman of Editorial Board), Service with Fighting Men: an Account of the Work of the American Young Men's Christian Association in the World War, New York, 1922, p. VII.

[10] **Shedd C.P.,** History of the World's Alliance of Young Men's Christian Associations, London, 1955, p. 243.

[11] Արդեն XIX դարի վերջին Օսմանյան կայսրության տարածքում գործող միսիոներական շարժումները, հատկապես Օտարերկյա առաքելությունների լիազորների ամերիկյան խորհուրդը, ունեին մի շարք բարձրագույն ուսումնական հաստատություններ: Դրանցից էին Արմենիա քոլեջը Խարբերդում (հիմնադրված 1854 թ.), Սիրիական բողոքական քոլեջը Բեյրութում (1862 թ.), Ռոբերտ քոլեջը Կ.Պոլսում (1863 թ.), Բութանիա քոլեջը Պարտիզակում (1874 թ.), Անատոլիա քոլեջը Մարզվանում (1886 թ.), Սբ. Պողոսի քոլեջը Տարսոնում (1888 թ.), Միջազգային քոլեջը Զմյուռնիայում (1891 թ.):

[12] **Սահակյան Ռ.,** Արևմտահայության ցեղասպանությունը և ինքնապաշտպանական կռիվները 1915 թվականին, Ե., 2005, էջ 76:

ուսանողական խմբերն ու միությունները (ասոցիացիաները): Իսկ հետագայում այդ քոլեջների շրջանավարտների միջոցով ԵՔԸ շարժումը սկսեց տարածվել դեպի Փոքր Ասիա, Կիլիկիա և Արևմտյան Հայաստան՝ ձևավորելով ԵՔԸ քաղաքային խմբեր ու միություններ: ԵՔԸ գործունեությունը հիմնականում ծավալվեց այն բնակավայրերում, որտեղ 1819–1871 թթ. միսիոներական կայաններ էին ստեղծվել և ավետարանական համայնքներ ձևավորվել: Առաջին համաշխարհային պատերազմից առաջ, Օսմանյան կայսրությունում շուրջ 40 տեղական ԵՔԸ-ներ կային, որոնցից 30-ը հիմնականում հայերի անդամությամբ: ԵՔԸ–ներ են գործել՝

- Արևմտյան Հայաստանում՝ Բիթլիսում (Բաղեշ), Էրզրումում (Կարին), Խարբերդում, Մարդինում (Մարտին), Վանում:
- Կիլիկիայում՝ Ադանայում, Այնթապում, Հաճնում, Մարաշում, Տարսոնում:
- Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում՝ Ադաբազարում, Զմյուռնիայում, Կ.Պոլսում, Մարզվանում, Պարտիզակում:

Կրթությունը ԵՔԸ ասոցիացիաների գործունեության առանցքն էր: Ընդ որում, փորձ էր արվում հավասարապես ուշադրություն դարձնել կրթության հոգևոր, մտավոր և ֆիզիկական բաղադրիչներին: Այդ իսկ նպատակով կազմակերպում էին Աստվածաշնչյան ընթերցանություններ, տարրական ուսուցում, հիգիենայի դասընթացներ, մարմնակրթական խմբակներ: Դրա համար հիմնում էին գրադարաններ, իգական դպրոցներ, մարզասրահներ, ճամբարներ:

Կ. Պոլսում տեղակայված ամերիկյան ԵՔԸ աշխատակից Էռնսթ Օտտո Ջեյքըբն 1922 թ. իր հաշվետվության մեջ Օսմանյան կայսրությունում ԵՔԸ ստեղծումը հետևյալ կերպ է նկարագրում. *«Մեր շարժման ակունքներում իսկական մի պատմական նախադեպ էր: Տարիներ առաջ, որոշ դեպքերում ութսունականներին [XIX դ. – Վ.Հ.], քաղաքներում երիտասարդների, միսիոներական դպրոցներում ու քոլեջներում տղաների փոքրիկ խմբակներ համախմբվեցին՝ միմյանց օգնելու ու ծառայելու և իրենց կոչեցին Երիտասարդաց Քրիստոնեական Ընկերակցություններ: Ոչ մի վճարովի աշխատող չկար: Միայն հազվադեպ այցելուները, ինչպիսիք էին Ուիշարդը, Մոթթը (և կարճեմ Ֆերմոդը) քաջալերում էին նրանց համաշխարհային եղբայրության մասը կազմելու գաղափարով»*[13]:

[13] Kautz Family YMCA Archives, University of Minnesota Libraries, Minneapolis, MN: Box - International Division: Folder – Armenia/Turkey 1884–1929. "1914 vs 1922: A Review of

Միսիոներական և մասնավորապես ԵՔԸ շարժման տարածման գործում ուսանողության էական դերակատարմամբ ոգևորված՝ 1886 թ. ամերիկյան ԵՔԸ-ն նախաձեռնում է «Օտարերկրյա առաքելությունների ուսանողական կամավորական շարժումը»: Առաջ քաշելով «ավետարանականացնել աշխարհը մեկ սերնդի միջոցով» հավակնոտ տեսլականը, այն Չինաստանի, Ճապոնիայի ու Հնդկաստանի հետ միասին իր հիմնական թիրախ է ընտրում Օսմանյան կայսրությունը: Այս շարժմամբ է սկսվում Ջոն Ռ. Մոթի[14] ակտիվ միջազգային գործունեությունը: Ջոն Ռ. Մոթը հավատում էր, որ վերոհիշյալ պետություններում ամերիկյան քոլեջների ուսանողներն այդ պետությունների ապագա առաջնորդներն են դառնալու, և նրանց ԵՔԸ շրջանակներ ներգրավելն աննախադեպ մի հնարավորություն կընձեռի այդ պետություններում ԵՔԸ և ընդհանրապես քրիստոնեության տարածման համար: 1895 թ. Մոթի անմիջական նախաձեռնությամբ հիմնադրվում է Աշխարհի ուսանողների քրիստոնեական դաշնությունը: Հենց նույն 1895 թ. խոսքից գործի անցնելու նպատակով Մոթն այցելում է Կ.Պոլիս և ականատես է լինում հայերի կոտորածներին: Նա գրում է. *«Քանի դեռ այս բարբարոս Օսմանյան վարչակազմը չի վերացել երկրի երեսից, Փոքր Ասիայում ու Բոսֆորի շուրջ սփռված քրիստոնյա ժողովուրդների համար իրական խաղաղություն չի լինելու»[15]:*

Սրանով, կարելի է ասել, վերջ է դրվում այն լավատեսությանը, որ միջազգային ԵՔԸ-ն հեշտությամբ կարող էր ներթափանցել Օսմանյան կայսրություն և համակարգել այնտեղ գործող ԵՔԸ խմբերի աշխատանքը: Աբդուլ Համիդ II-ի վարչակազմը հետագա տարիներին ջանք չէր խնայում եվրոպական և

Association Work in Turkey”.

[14] 1946 թ. Խաղաղության Նոբելյան մրցանակի արժանացած Ջոն Ռ. Մոթը (1865–1955 թթ.) Ադանայի ջարդերի ժամանակ եղել է Ամերիկյան ԵՔԸ քարտուղար, այդ կազմակերպության Օտարերկրյա առաքելությունների ուսանողական կամավորական շարժման հիմնադիրը և համակարգողը: Կարևորագույն դերակատարություն է ունեցել Օսմանյան կայսրությունում ԵՔԸ և քրիստոնեական ուսանողական շարժման տարածման գործում, եղել է 1894–1896 թթ. Աբդուլ Համիդ II-ի կազմակերպած Հայկական կոտորածների ականատեսը: 1915–1928 թթ. եղել է Ամերիկյան ԵՔԸ միջազգային կոմիտեի գլխավոր քարտուղար, իսկ հետագայում Համաշխարհային ԵՔԸ նախագահ: Ջոն Ռ. Մոթը Համաշխարհային Ուսանողական Քրիստոնեական Համադաշնության հիմնադիր գլխավոր քարտուղարն էր (1885–1920 թթ.), 1948 թ. եկեղեցիների համաշխարհային խորհուրդ կազմակերպության հիմնադրման նախաձեռնողներից մեկը: 1915 թ. միացել է Դոջի կոմիտեին, որը հետագայում վերափոխվել է Մերձավորարևելյան նպաստամատույցի և որի խորհրդի անդամ է մնացել մինչև փակվելը՝ 1931 թ.:

[15] **Hopkins C.H., Matt J.R.,** Grand Rapids, 1979, p. 133.

ամերիկյան ԵՔԸ-ների համակարգող գործունեության առջև փակ պահելու կայսրությունը: Արդյունքում՝ մինչև 1908 թ. ԵՔԸ-ն մեկուսացած էր միսիոներական քոլեջներում կամ ավետարանական համայնքներում: Մի կողմից, Բ. Դուռը դեմ չէր միսիոներական քոլեջների կամ ավետարանական համայնքների գոյությանը: Սրանք, կարծես թե կայսրության քրիստոնյա ժողովուրդների ուծացման, ազգային արմատներից կտրելու, ազգային միասնությունը խաթարելու միջոց էին: Մյուս կողմից, այդ նույն վարչակազմը վտանգավոր էր համարում այն հայ երիտասարդներին, որոնք ուսանում էին Օսմանյան կայսրությունում գործող արտասահմանյան ուսումնական հաստատություններում՝ վտանգ ներշնչելով դառնալու արևմուտքի ազդեցության գործակալներ:

Այս առումով հետաքրքրական է Րաֆֆու տեսակետը. *«Թուրքիայի անհեռատես կառավարությունը, որ հայերի մեջ երկպառակություն գցելու միջոցով և նրանց միությունը քանդելու համար թույլ էր տալիս, որ կրոնափոխությունը տարածվի հայերի մեջ, բայց նա մի սխալանքից մի ուրիշ ավելի վատի մեջ ընկավ, որ հայերից կաթոլիկներ և բողոքականներ պատրաստելով, թեև մի կողմից քանդեց նրանց միության կապերը, բայց մյուս կողմից՝ իրեն վնասեց, դրանով մի ճանապարհ բացելով կաթոլիկ և բողոքական պետությունների (Անգլիայի և Ֆրանսիայի) դիպլոմատիայի առջև միջամտություն գործելու իրենց հավատակիցների առիթով Թուրքիայի ներքին գործերում»*[16]:

Ավելին, 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում կրած ջախջախիչ պարտությունից թուլացած Օսմանյան կայսրությունը ստիպված էր առճակատվելու Հայկական խնդրին, որպես այլևս միջազգայնացված հարցի: Կայսրությունում գործող ու հայերի հետ համագործակցող ցանկացած արևմտյան կազմակերպություն օսմանյան վարչակազմի կողմից դիտարկվում էր որպես հայերի ձայնը տեղ հասցնելու և նրանց հանդեպ համակրանք առաջացնելու լրացուցիչ մի լծակ:

1908 թ. Աբդուլ Համիդի II-ի տապալումը և սահմանադրական կարգերի հռչակումը արևմտյան տերություններում «հիվանդ մարդու» ապաքինման պատրանքներ ծնեցին: Աշխուժացավ Օսմանյան կայսրությունում թվացյալ քաղաքակրթական համընդհանուր ծարավին հագուրդ առաջարկողների գործունեությունը: Եվ ահա, «հյուրիեթով»[17] քաջալերված, Ամերիկյան ԵՔԸ-ն որոշում է համակարգել այդ բացառապես տեղական և բացառապես քրիստոնյա-

[16] **Րաֆֆի,** Ինչ կապ կա մեր և Տաճկաստանի հայերի մեջ (Երկերի ժողովածու, հ. 11, Ե., 1991, էջ 295):

[17] Նկատի ունի երիտթուրքերի ազատության կարգախոսը:

ներից (մեծ մասամբ հայերից) կազմված ԵՔԸ-ները և համաօսմանյան մի կազմակերպություն ձևավորել՝ հույս ունենալով ներգրավել նաև մահմեդականների: Կիզակետում կրկին Ջ. Ռ. Մոթն էր: 1908 թ. ամերիկյան ԵՔԸ միջազգային կոմիտեն Լ. Չեմբրսին նշանակում է Օսմանյան կայսրությունում ԵՔԸ համակարգող քարտուղար, որը 1909 թ. մարտին կայսրությունում իր հետախուզական-ճանաչողական շրջայցի ընթացքում այցելում է Կիլիկիա և ջարդերի ժամանակ հայտնվում Ադանայում: Այդ ողբերգական օրերին Լ. Չեմբրսն աչքի է ընկնում բացառիկ խիզախ ու հայանպաստ գործունեությամբ, երբ հատկապես Բրիտանական կայսրության փոխհյուպատոս Դաութի-Ուայլիի վիրավորվելու պատճառով նրա վրա են դրվում վերջինիս պարտականությունները: Մի կողմ թողնելով Օսմանյան կայսրությունը քաղաքակրթելու սին տեսլականը՝ նա լծվում է հայերին ջարդերից փրկելու, վիրավոր ու անօթևան մնացածների համար մարդասիրական գործին[18]: Ջ.Ռ. Մոթին ուղարկած նամակում նա գրում է. *«…Ավաղ, նոր վարչակազմի խուսփացած պայծառ ժամանակները ամբողջովին ի դերև ելան, ու հիմա կերակրելուց ու կերակրվելուց զատ, մարդկանց էլ ոչինչ չի մնացել, և ոչ սիրտ ունեն, ոչ էլ ժամանակ մտավոր կամ ֆիզիկական վեհ գաղափարների համար»*[19]:

Մեր կարծիքով Կիլիկիայի աղետը մեկընդմիշտ հաստատեց, որ օսմանյան քաղաքական մտքի որևէ դրսևորման համար բազմազգ կայսրության փլատակներից նոր թուրքական պետության կայանալը ենթադրում էր այդ կայսրության մյուս ազգերի (և հատկապես հայերի) էթնիկ զտում ու հայրենազրկում, բնաջնջում և ուծացում: Թուրքական քաղաքական ու տնտեսական վերնախավը հատկապես չէր հանդուրժում այն, որ կայսրության քրիստոնյաները անհամեմատ ավելի կրթված էին, գործարարության մեջ՝ առավել փորձված ու հաջողակ: Դրա վկայությունն է 1914–1923 թթ. հայերի, ասորիների և պոնտական հույների ցեղասպանությունը: Այն նաև ազդակ հանդիսացավ ԵՔԸ միջազգային կառույցների համար՝ վերանայելու կայսրությունում գործելու իրենց մարտավարությունը: Մարդասիրական օգնությունն առաջնահերթություն դարձնելն այդ նոր մարտավարության միայն մի մասն էր: Բոլոր դեպքերում Ադանայի ծրագիրը համաշխարհային ԵՔԸ առաջին մարդասիրական

---

[18] **Balakian P.,** The Burning Tigris – the Armenian Genocide and America's Response, New York, 2004, pp. 148–155.

[19] Kautz Family YMCA Archives, University of Minnesota Libraries, Minneapolis, MN: Box - International Division: Folder – Armenia / Turkey 1884–1929. Տես նաև՝ **Համբարձումյան Վ.**, նշվ. աշխ., էջ 159:

նախաձեռնությունը դարձավ՝ միջոցներ կենտրոնացնելով ոչ միայն ԱՄՆ-ից, այլև Շվեյցարիայից, Ֆրանսիայից, Ֆինլանդիայից[20]: Սրանով սկսվեց Օսման-յան կայսրությունում ԵՔԸ գործունեության մի նոր փուլ:

Ամփոփելով ԵՔԸ 1881–1909 թթ. Օսմանյան կայսրությունում ծավալած գործունեության առաջին փուլը, կարող ենք եզրակացնել.

- Մտահոգված Օսմանյան կայսրությունում քրիստոնյաների, հատկապես հայերի ծանր վիճակից, ԵՔԸ-ը վերջիններիս դարձրեց կայսրություն ներթափանցելու միջոց և իր գործունեության առանցք:
- Օսմանյան կայսրության քրիստոնյաներին, հատկապես հայերին սատարելով, ամերիկյան ԵՔԸ-ն ի վերջո կարողացավ ապահովել իր ներկայությունն այնտեղ՝ որպես հզորացող Ամերիկայի Միացյալ Նահանգների շահերի և «փափուկ դիվանագիտության» գործիքակազմի կարևոր բաղադրիչ:
- Նշված ժամանակահատվածում ԵՔԸ կազմակերպությունները իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրականացվող ոճրագործությունների դեմ:

THE OPERATION OF THE YOUNG MEN'S CHRISTIAN ASSOCIATION IN THE OTTOMAN EMPIRE (1881–1909)

HAMBARDZUMYAN V.

Summary

The Young Men's Christian Association (YMCA) was founded in 1844. Already after a decade it was widely spread in Western European countries and North America, becoming the largest youth movement in the world.

The YMCA idea penetrated into the Ottoman Empire through the Christian colleges established by especially American missionaries, assisting the enhancement of the YMCA structures and services there, meanwhile assuming a key role in the soft diplomacy of Western governments. In October 1895 John R. Mott traveled to Constantinople as a first pioneer representing the American

[20] **Shedd C.P.**, History of the World's Alliance of Young Men's Christian Associations, London, 1955, pp. 457, 663.

Պատկերամարտի նշանները առկա էին առաջին իսկ եկեղեցական տիեզերաժողովների ժամանակ: Իսկ պատկերապաշտության հիմնավորումները միջադեպային բնույթ էին կրում, ինչպես նաև պատկերամարտի դրսևորումները: Պատկերամարտի դեմ ուղղված առաջին լուրջ գործը հենց 604–607 թթ. կաթողիկոսական տեղապահ նշանակված Վրթանես Քերթողի հիշյալ երկն է: Ս. Տեր-Ներսեսյանի հիշյալ հոդվածում մեծ թվով աղբյուրներ են բերված, սկսած առաջին տիեզերաժողովների ժամանակներից, հօգուտ պատկերների՝ ուղղված հրեաների, ինչպես նաև նրանց հետևորդ քրիստոնյա և այլակրոն պատկերամարտիկների դեմ: Ս. Տեր-Ներսեսյանի կողմից հմտորեն և խոր բանիմացությամբ քննված աղբյուրների վերադիտարկումը անիմաստ ենք համարում, քանի որ դժվար է ինչ-որ նոր կամ ավելի կարևոր բաներ ասել նրա

բերած աղբյուրների շուրջ: Բայց չենք կարող նաև չխոսել Հովհան Դամասկոսցու երեք ճառերի մասին, որոնք ուղղված են պատկերամարտիկների դեմ և վերնագրված են իբրև «Երեք ճառ ի պաշտպանություն պատկերապաշտության»: Նա խորապես զգացել է այն վտանգը, որ պատկերամարտը կրում էր ոչ միայն ընդդեմ պատկերների կարևորության և եկեղեցու համար կործանարար լինելու պատճառով, այլև ճանապարհ էր բացում անասնական վայրենության ու բարբարոսության, որ կարող էին կործանել դարերով ստեղծված գրական և գեղարվեստական մեծագույն արժեքները, ինչը և մեծ չափով տեղի ունեցավ պավլիկյանների ու պատկերամարտության շարժումների պատճառով Բյուզանդիայում և արաբական լծի ժամանակ՝ Հայաստանում, երբ ոչ միայն ոչնչացվել են գեղարվեստական, հատկապես պատկերային արժեքները, այլև ոչ մի նոր բան չի ստեղծվել, բացառությամբ ծիսական և օրենսդրական ասպարեզների:

Հովհան Դամասկոսցու պատկերապաշտական գործունեությունը էժան չի նստել նրա վրա: Սրբին մեղադրել են որպես օրինախախտ, կտրել են ձեռքը, և նրա երկարատև աղոթքներից հետո ձեռքը աճել է[21]:

Այժմ անդրադառնանք Հովհան Դամասկոսցու ճառերին, մի կողմ թողնելով ամբողջ VIII դարի պատկերամարտությունը, որը դարավերջում Բյուզանդիայում ավարտվում է պատկերապաշտության հաղթանակով[22]: Հայր Աստված անպատկերելի է. «Եվ խոսեցաւ Տէր ընդ ձեզ ի մէջ հրոյն. ձայն պատգամաց լուարուք դուք. եւ նմանութիւն ինչ ոչ տեսէք, բայց միայն զբարբառն» (Բ Օր., Դ, 12): Հետեւաբար, ըստ Դամասկոսցու, Հայր Աստված անպատկերելի է: Հրեաների դեպքում պատկերը արգելվում է, «քանի որ նրանք (հրեաների նախնիները – Վ.Ղ.) հակված են կռապաշտության»[23]: Իսկ երբ տեսնում ես Անմարմնին, որը մարդացավ մեզ համար, ապա կարող ես նկարել նրա մարդկային կերպարը: Եվ ահա գրեթե Վրթանես Քերթողի ոգով նա բացականչում է. «Երբ անտեսը մարմին է առնում, դառնում տեսանելի, ապա նկարիր Հայտնվածի նմանությունը: Երբ Նա, ով իր բնության գերազանցության շնորհիվ զուրկ է մարմնից, ձևից, քանակից, որակից և մեծությունից... հագավ մարմնական կերպարանք, ապա պատկերիր տախտակների վրա եւ ցույց տուր Նրան, որ հայտնվեց: Պատկերիր նրա վայրէջքը, ծնվելը Կույսից, Մկր-

[21] **Дамаскин Иоанн.** Три слова в защиту иконопочитания. В кн.: **Корха В.** Иконопочитание до и после Иоанна Дамаскина СПб., 2001, с. 11.

[22] **Лазарев В.Н.** История византийской живописи, т. 1, М., 1986, с. 59–60.

[23] **Дамаскин Иоанн,** նշվ. աշխ., էջ 34:

տումը Հորդանանում, Այլակերպությունը Թաբոր [լեռան վրա], չարչարանքները, որ մեզ էլ անջատեցին չարչարանքներից, մահ, հրաշքները, որ նրա աստվածային բնության նշաններն են, որ կատարվել են աստվածային զորությամբ մարմնի միջոցով, փրկարար խաչը, թաղումը, հարությունը, համբարձումը երկինք, այդ ամենը նկարիր եւ խոսքով, եւ ներկերով: Մի՛ վախեցիր, մի երկյուղիր»[24]:

Այնուհետև Դամասկոսցին խոսում է պատկերի և պատկերին խոնարհվելու մասին: Հայտնի է, որ Հին Կտակարանի արդարները խոնարհվել են ոչ արդար, չարամիտ մարդկանց, նաև հրեշտակների առաջ - Աբրահամը՝ Էմմորի, Հակոբը՝ իր եղբայր Իսավի ու փարավոնի, Հիսուս Նավյան՝ հրեշտակին, բայց նրանց չեն ծառայել:

Սա կարևոր կետ է Դամասկոսցու գրվածքում, որ չունի Քերթողը: Նախ, պատկերը նախատիպից տարբեր է՝ նման լինելով նախատիպին առավել կամ պակաս չափով: Իսկ ի՞նչ է պատկերը՝ նախատիպի յուրահատկությունների նմանությունը, «քանի որ պատկերը ամեն ինչում չէ, որ նման է նախատիպին»[25]:

Մենք չենք մտնի աստվածաբանական նրբությունների մեջ, այլ միայն կհետևենք պատկերի կարևորությանը քրիստոնյայի կյանքում: Պատկերի և նախատիպի հարաբերությունը միջնադարում բավականաչափ քննել ենք մեր «Սարգիս Պիծակ» մենագրության մեջ՝ օգտվելով ինչպես Ղուկաս Վանանդեցու, այնպես էլ Հովհան Դամասկոսցու գրվածքներից[26]: Մենք դեռ անդրադառնալու ենք նաև զարդերի պատկերագրությանը:

Հովհան Դամասկոսցին Դիոնիսիոս Արեոպագացու երկերի և հատկապես նրա պատկերային փիլիսոփայության առաջին խոր մեկնաբանն է: «Ս. Դիոնիսիոսը,- ասում է նա,- իրազեկ էր աստվածային գործերին և Աստծո օգնությամբ քննել է՝ ինչ Աստծուն է վերաբերում, այդ պատկերները և օրինակները (Ս. Գրքում - Վ.Ղ.) համարում է նախասահմանումներ»[27]:

Ս. Գիրքը, որպես աստվածային իրողությունների շարադրանք զգայական պատկերների ձևով, Ս. Դիոնիսիոսը ներկայացնում է հենց «Երկնային քահանայապետության» մեջ: «Եվ որովհետև մեր միտքը չի կարող այլ կերպ ձգտել երկնային քահանայապետությունների այն աննյութ նմանություններին ու տե-

[24] Նույն տեղում, էջ 35:

[25] Նույն տեղում:

[26] **Ղազարյան Վ.,** Սարգիս Պիծակ, Ե., 1980, էջ 12–13:

[27] Նույն տեղում, էջ 36:

սիլքներին, ապա նրանց կմոտենանք նյութական [օրինակների] առաջնորդությամբ և երևացող գեղեցկությունները կհամարենք աներևույթ վայելչության կերպարանքներ, իսկ զգայական անուշահոտությունները՝ [Սուրբ] Հոգու իմացական բաշխման ձևեր, նյութական լույսը՝ աննյութ լուսավորության պատկեր...»[28]: Ըստ Ս. Դիոնիսիոսի, Ս. Գրքի պատկերայնության հիմքում (նման եւ ոչ նման պատկերներ) ընկած է Պողոս Առաքյալի հետեւյալ խոսքը. «Զի աներեւոյթքն Նորա (Աստուծոյ – Վ.Ղ.) ի սկզբանէ աշխարհի արարածովքս իմացեալ տեսանին, այսինքն մշտնջենաւորութիւն եւ զօրութիւն եւ աստուածութիւն նորա (Աստուծոյ – Վ.Ղ.)» (Առ Հռովմայեցիս, Ա, 20): Այս մեջբերումից օգտվում է Հովհան Դամասկոսցին, պարզաբանելով, որ արարածների մեջ մենք նկատում ենք պատկերներ, այնպես որ Ս. Երրորդությունը պատկերացնում ենք արևի, լույսի և ճառագայթի կամ էլ բխող աղբյուրի միջոցով, կամ էլ վարդի թփի, ծաղկի և անուշահոտության շնորհիվ[29]:

«Անմարմին եւ անձեւ Աստված երբեք որեւէ կերպ չի պատկերվել: Իսկ այժմ, երբ Աստված հայտնվել է մարմնացած եւ մարդկային տեսքով, ես պատկերում եմ Աստծո տեսանելի կողմը: Չեմ խոնարհվում նյութին, այլ խոնարհվում եմ նյութի Արարչին, որը նյութ է դարձել ինձ համար, որը հաճել է բնակվել նյութի մեջ եւ նյութի միջոցով արարել է իմ մկրտությունը, եւ չեմ դադարի պաշտել նյութը, որի շնորհիվ ինձ շնորհվել է փրկություն...թե՞ խաչի փայտը, որ եռակի երջանիկ է եւ երանելի, նյութ չէ...Թե՞ նյութ չեն թանաքը եւ Ավետարանների ամենասուրբ գիրքը...Մի՛ արհամարհիր նյութը, քանի որ այն արժանի չէ արհամարհանքի: Այն, ինչ առաջացել է Աստծուց, արժանի չէ արհամարհանքի: Դա (նյութի արհամարհումը – Վ.Ղ.) մանիքեցիների կարծիքն է...»[30]:

Այնուհետև, որպես պատկերի հիմնավորում, բերվում է Տիրոջ խոսքը Մովսեսին. «Խօսեցաւ Տէր ընդ Մովսիսի եւ ասէ, Ահաւադիկ յանուանէ կոչեցեալ է իմ Բեսելիէլ զՈւրիեան, զորդի Ովրայ յազգէ Յուդայ. եւ լցուցի զնա աստուածեղէն Հոգւով իմաստութեան եւ հանճարոյ եւ գիտութեան ամենայն գործոյ: Խելամուտ լինել եւ ճարտարապետել, գործել զոսկին եւ արծաթ եւ պղինձ: Զկապուտակն եւ զծիրանին եւ զկարմիրն մանեալ. եւ զականակապն (գոհա-

---

[28] **Դիոնիսիոս Արեոպագացի,** Աստվածաբանական երկեր. Արեոպագիտիկաներ, Ե., 2013, էջ 16:

[29] **Дамаскин Иоанн**, նշվ. աշխ., էջ 37.

[30] Մանիքեցիները (իրենց առաջնորդ Մանիի անունով) գնոստիկական աղանդ են զրադաշտական հիմքով եւ քրիստոնեական տարրերով: Ըստ նրանց, նյութը խավարի իշխանությունն է, որ ձգտում է կուլ տալ լույսի ուրախությունը (նույն տեղում, էջ 41):

րով բանած – Վ.Ղ.) ի լրութիւն գործոյն, եւ զիիւսնութիւն փայտից, գործել ըստ ամենայն գործոյ: Եւ ես ահա ետու զնա եւ զեղիաբ Աքիսամայ յազգէ Դանայ... եւ ի սիրտ ամենայն իմաստնոյ ետու զիմաստութիւն, եւ արասցեն զամենայն զոր միանգամ պատուիրեցի քեզ. զխորանն վկայութեան եւ զտապանակ կտակարանացն եւ զքաւութիւնն որ ի վերայ նորա, եւ զամենայն սպաս խորանին եւ զզոհանոցսն: Եւ զսեղանն եւ զամենայն զկահ նորա, եւ զսեղանն խնկոցն, եւ զաւազանն եւ զխարիսխ նորա, Եւ զպատմուճանս պաշտաման, եւ զհանդերձս սրբութեանն Ահարոնի քահանայի, եւ զպատմուճանս որդւոց նորա ի քահանայանալ ինձ, Եւ զեղն օծութեան եւ զխունկս հանդերձանաց սրբութեանն Ահարոնի քահանայի, եւ զպատմուճանս որդւոց նորա ի քահանայանալ ինձ, եւ զեղն օծութեան եւ զխունկս հանդերձանաց սրբութեանն, եւ զամենայն զոր միանգամ պատուիրեցի քեզ՝ արասցես» (Ելք, ԼԱ, 1–11):

Գրեթե նույնը որոշ մանրամասներով պատմիրում է Մովսեսը Իսրայելի ժողովրդին (Ելք ԼԵ, 1–19):

Եվ եթե Տիրոջ և Մովսեսի բերանով թվարկվում են Տիրոջ խորանի համար ամենաթանկարժեք քարերը, իրերը, սուրբ սեղանները իրենց ողջ շքեղ արեւելյան հարդարանքով, ապա Դամասկացին դիմում է Մովսեսի խորանի զարդարանքներից ամենաէժան ու ցածր նյութերին. «Ի՞նչ կա ավելի ողորմելի բան, քան այծի բուրդը եւ ներկերը. մի՞թե ներկեր չեն որդան կարմիրը, ծիրանին եւ կապույտը, որ ստացվում էին որդերից եւ կակղամորթերից: Հին Իսրայելը չի տեսել Աստծուն, [մենք] բաց երեսով տեսնում ենք Աստծո փառքը»[31]:

Հովհան Դամասկոսցին պատկերների իր պաշտպանությամբ հենվում է Դիոնիսիոս Արեոպագացու ուսմունքի վրա, պատկերամարտիկներին համարելով տգետ և սահմանափակ մարդիկ: Այդ մոտեցումը ցայտուն է կրետացիների՝ Տիտոս քահանայապետին ուղղված խոսքում. «Արդ մեզ համար էլ նրանց (Սուրբ գրքերի – Վ.Ղ.) մասին ռամիկների ունեցած կարծիքների փոխարեն, պետք է սրբազնապես թափանցել սրբազան նշանակների խորքը եւ ոչ թե անարգել նրանց աստվածային պատկերագրությունների բովանդակած գաղափարները եւ անճառելի ու գերբնական տեսիլքների հայտնաբանական պատկերները»[32]:

[31] **Дамаскин Иоанн,** նշվ. աշխ., էջ 42:
[32] **Դիոնիսիոս Արեոպագացի,** նշվ. աշխ., էջ 231:

Ըստ մեկնիչի (Մաքսիմոս Խոստովանողի), աշխարհի ստեղծումը վարագուրում է Աստծո անտեսանելի կատարելությունները, ուստի արդարացվում է խորհուրդ-նշանակների կարևորությունը[33]:

Երկրորդ ճառում Դամասկոսցին կարծես ավելի համոզիչ կերպով է շեշտում պատկերի անհրաժեշտությունը: «Այսպիսով նաեւ պատկերներին վերաբերող գործում պետք է գտնել ինչպես ճշմարտությունը, այնպես էլ այն իրականացնողների նպատակը: Եվ եթե այն ճշմարիտ է և իրավացի, և եթե պատկերները արվում են Աստծո և Նրա սրբերի փառքի եւ առաքինության մեջ մրցելու համար, հանուն արատից խուսափելու, հանուն հոգիների փրկության, ապա դրանք պետք է ընդունել ուրախությամբ եւ երկրպագել, որպես կերպարներ, նմանակումներ եւ նմանություններ եւ որպես գրքեր անգրագետների համար, եւ խոնարհվել, համբուրել եւ ողջունել աչքերով եւ շուրթերով եւ սրտով, որպես մարմնացած Աստծո կամ նրա Մոր կամ Քրիստոսի չարչարանքների փառքի մասնակիցներ, հաղթողներ եւ սատանայի, դեւերի եւ նրանց մոլորության կործանողներ»[34]:

Այսպիսով նյութը քամահրելու բան չէ: Այն, անտիկ ըմբռնումով, մատերիան է, ծնունդ է Արարչության, քանզի ասվում է. «եւ ետես Աստուած զամենայն զոր արար, եւ ահա բարի են յոյժ» (Ծնունդ, Ա, 31): «Եվ այսպիսով,-ասում է Դամասկոսցին,- ընդունում եմ, որ նյութը Աստծո արարածն է եւ որ այն գեղեցիկ է»[35]: «Ես չեմ խոնարհվում նյութին - գրում է նա,- այլ խոնարհվում եմ նյութը արարողին, որ [ինքը] հանուն ինձ նյութ դարձավ[36]»: Դամասկոսցին այստեղ որպես նյութ հասկանում է նաև մարդացած Քրիստոսի մարմինը: Այսպիսով եկեղեցում սրբագործված առարկաները՝ թանաքը, մագաղաթը, սպասքը և այլն, որոնց խոնարհվում ենք, խոնարհվում ենք Աստծուն, որ մեզ փրկեց՝ դրանք են խաչը, ոսկեղենով, արծաթեղենով պատրաստված սրբազան անոթները: Նույնը վերաբերում է Հիսուսին, առաքյալներին, մարգարեներին, սրբերին նվիրված իկոնաներին կամ պատկերներին:

Մեզ թվում է, թե մատչելիորեն ներկայացրեցինք Հովհան Դամասկոսցու խոսքը պատկերների անհրաժեշտության մասին, որն ընդգրկում է և հարս-

[33] Նույն տեղում, ծան. 557, էջ 331:

[34] **Дамаскин Иоанн,** նշվ. աշխ., էջ 60–61:

[35] Նույն տեղում, էջ 64:

[36] Դամասկոսցին հենվում է Հովհաննու Ավետարանի վրա. «Ի սկզբանէ էր Բանն, եւ Բանն էր առ Աստուած, եւ Աստուած էր Բանն... Ամենայն ինչ նովաւ եղեւ, եւ առանց Նորա եղեւ եւ ոչ ինչ որ ինչ եղեւն» (Յով. Ա, 1–2): Հայերեն Աստվածաշնչում ինչը, որ եղավ Աստծուց, պետք է հասկանալ նյութը եւ ավելին, քան նյութը:

տացնում Վրթանես Քերթողի գաղափարները: Անուրանալի է Հովհան Դամասկոսցու ներդրումը պատկերապաշտության պաշտպանության հարցում, բայց դա չխանգարեց, որ Բյուզանդիան շուրջ հարյուր տարի Պավլիկյանների շարժումների ժամանակ և հետո գերի մնար պատկերամարտությանը, իսկ Վրթանես Քերթողի՝ պատկերների անհրաժեշտությանը նվիրված ճառը անզոր էր արաբների բերած պատկերամարտության առաջ, որոնք իրենց իշխանության ժամանակ վերացրեցին Հայաստանում ոչ միայն կոթող-քանդակները, այլև ամբողջ պատկերային ժառանգությունը և եկեղեցաշինությունը:

Հայտնի է, որ պատկերամարտից անմիջապես առաջ ի հայտ եկան Դիոնիսիոսի երկերը, որոնց տարածման գործում մեծ դեր խաղաց Հովհան Դամասկոսցին դրանք ի հայտ բերող և մեկնող Մաքսիմ Խոստովանողից հետո: Բարսեղ Կեսարացին՝ կապադովկիական նշանավոր սուրբը և հայրը ևս կարծում էր, որ «պատկերվածին մատուցված պատիվը անցնում է նախատիպին»[37]: Ավելին. «Դեւերը դողում են սրբերից եւ փախչում նրանց ստվերից. պատկերը նույնպես ստվեր է, եւ ես այն ստեղծում եմ որպես դեւերի հալածող»[38]:

Որպեսզի ավելի հեռուն չգնանք, կանգ առնենք Կյուրեղ Ալեքսանդրացու վրա, քանի որ Ս. Երրորդության և Հիսուսի բնության մասին հայոց եկեղեցու հավատամքը հենված է Կյուրեղ Ալեքսանդրացու և Նիկիայի առաջին տիեզերական եկեղեցաժողովի հավատո հանգանակի վրա, ապա հայ եկեղեցու և հատկապես Վրթանես Քերթողի պատկերային բանաձևի հիմքում ևս ընկած է Ս. Կյուրեղի հեղինակությունը, որը Թեոդոս կայսերը ուղղված ողջույնի խոսքում հստակ ասում է. «Իսկ պատկերները նման են նախատիպերին, քանի որ նրանք պետք է լինեն այսպես, և ոչ թե այլ կերպ», քանզի «պատկերները միշտ պահպանում են նմանությունը նախատիպերի հետ»[39]:

Այս ամենը, ինչ դիտարկեցինք վերևում, կարծես թե ամբողջացնում են Ներսես Շնորհալին XII դարում և Ղուկաս Վանանդեցին XVIII դարում, ինչի մասին խոսվում է մեր «Սարգիս Պիծակ» մենագրության մեջ[40]: Ինչպես ասել ենք, «եւ՛ նախագոթական, եւ՛ գոթական, եւ՛ հայ մանրանկարչության վառ գույները, նաեւ ոսկին լույսի արտաքին զգայական խորհրդանիշներն են, որոնք ստեղծում է մարդը: Իսկ նախատիպը, այն, ինչ համարվել է աստվածային լույս, մեր զգայարաններին անմատչելի է»: «...Փրկչական պատկերին՝ ո՛չ նիւ-

---

[37] **Дамаскин Иоанн,** նշվ. աշխ., էջ 111.

[38] Նույն տեղում:

[39] Նույն տեղում, էջ 132–133:

[40] **Ղազարյան Վ.,** նշվ. աշխ., էջ 12–16:

թոյն եւ դեղոցն, այլ Քրիստոսի որ է պատկեր աներեւութին Աստուծոյ Հօր՝ երկիրպագանեմք նովաւ»[41], - գրում է Ներսես Շնորհալին:

Այստեղից այն էական հետևությունը, որ երկրպագելի էին ոչ թե պատկերի նյութը, դեղերը (ներկերը), նույնիսկ ինքը՝ պատկերը, այլ Աստծո անհաս էությունը, որը գաղափարվում է արվեստի պատկերային լեզվով[42]: Մի փոքր տարօրինակ է, որ Ղուկաս Վանանդեցու պես մարդը, որի հետաքրքրություններն կապված էին նոր-նոր լուսավորչականություն թևակոխած Եվրոպայի առաջավոր գիտության և այլ առաջավոր ձեռքբերումների հետ, պատկերների անհրաժեշտության մասին իր դատողություններում կանգած է Վրթանես Քերթողի, Հովհան Դամասկոսցու և Ներսես Շնորհալու հայացքների վրա: «Գիտելի է աստ,- գրում է նա,- զի պատկերն ոչ պարտի ըստ բոլորին իւր նախատիպին նմանիլ՝ այլ ըստ մասին, առաւել կամ նուազ. բայց ոչ երբեք բոլորովին: Քանզի ուր գոյ բոլորովին նմանութիւն, ոչ ասի՝ պատկեր կամ նմանութիւն, այլ նախատիպ եւ նոյնութիւն: Ուրեմն ամենայն պատկեր այնպէս պարտի նմանիլ իւր նախատիպին՝ զի եւ իցէ աննման: Քեզ օրինակ: Ադամ էր պատկեր Քրիստոսի նմանութեամբ եւ աննմանութեամբ»[43]:

ASSERTING THE PRESENCE OF IMAGES AND ICONOGRAPHY IN THE EARLY MIDDLE AGES

GHAZARIAN V.

Summary

Incentives of iconography in early Middle ages can be revealed in Armenia of the end of VI century in the treatise “Against the Iconoclasm” by the vicegerent of Catholicos Vrtanes Kertogh and in VII century in three speaches against iconoclasm by Iohann of Damaskin. The first of these treatises were written before the conquest of Armenia by Arabs, the second – before the iconoclasm in Byzantium. According to S. Der Nersessian, Vrtanes examines the icon as an “example of a great symbol” as we see in the descriptions of the images and ornaments in the

[41] **Ներսէս Շնորհալի,** Թուղթ ընդհանրական, Էջմիածին, 1865, էջ 191:
[42] **Ղազարյան Վ.,** նշվ. աշխ., էջ 16:
[43] **Ղուկաս Վանանդեցի,** Պատկերասէր պատկերատեաց, Ամստերդամ, 1716, էջ 8, 14:

tabernacle of Moses and in the temple of Solomon in the Bible. Vrtanes first represents the list of the images in the Armenian church.

УТВЕРЖДЕНИЕ ИЗОБРАЖЕНИЯ И ИКОНОГРАФИИ В РАННЕМ СРЕДНЕВЕКОВЬЕ

КАЗАРЯН В.

Резюме

Вопрос об изображениях внутри церкви впервые был поднят в Армении в конце VI в. местоблюстителем католикоса Армении Вртанесом Кертогом. В начале VII в. в Византии Иоанн Дамаскин обратился к этому вопросу в своих трех речах, направленных против иконоборчества. Речь Вртанеса Кертога была написана до захвата Армении арабами, речи Иоанна Дамаскина – до возникновения движения иконоборчества в Византии. Согласно С. Тер-Нерсесян, Вртанес Кертог рассматривает изображения в качестве “образца великого символа”, что имеет место в Библии в описании изображений в Скинии Моисея и в храме Соломона. Вртанесом Кертогом впервые был представлен список канонических изображений внутри церкви.

Спустя сто лет Иоанн Дамаскин возвращается к вопросу об изображениях внутри церкви. Необходимость их наличия в церкви он обосновывал сочинениями Дионисия Ареопагита, которые не были известны Вртанесу. В них Св. Писание рассматривалось в качестве символических изображений.

THE REFLECTION OF ARMENIAN-CHALCEDONIAN TRADITIONS ON THE FRESCOS OF ST. GREGORY CHURCH (TIGRAN HONENTS) OF ANI

HAKOBYAN Z.

hakobyanzaruhy@ysu.am

St. Gregory (Grigor) Church of Ani, which is better known as Tigran Honents, is decorated with frescos and is the only monument in the historical capital of Armenia whose wall paintings have been preserved in a relatively good condition

The frescos at Tigran Honents are of great interest from historical and confessional perspectives. Besides being considered as Armenian-Chalcedonian these frescos have been regarded as as Georgian. Our aim is to dwell upon the confessional peculiarities of the frescos and show their reflection in the murals which ground the fact that the frescos of St. Gregory Church have been painted by Chalcedonian Armenians.

The monument was built during the second period of flourishing of Ani under the reign of Zakarian brothers on the Eastern slope of the gorge being a part of the monastery complex[1]. The monument was comissioned by a wealthy citizen of Ani – Tigran Honents, who, as the large inscription on the Southern facade claims, finished the construction in 1215 and presented it to the founder of the Armenian church St. Gregory[2].

St. Gregory church became widely known among public since the archaeological excavations of Nikolaos Marr in Ani, and the scholar was the first to describe the monument as Armenian-Chalcedonian, particularly considering the frescos, as well as the church and the commissioner as Chalcedonian[3]. Many

---

[1] **Марр Н.Я.** Ани, Л.-М., 1934, с. 85–86; **Орбели И.А.** Избранные труды, Е., 1963, с. 126.

[2] Դիվան հայ վիմագրության, պրակ 1, Անի քաղաք (կազմ. Հ.Ա. Օրբելի), Ե., 1966, էջ 62–63 (23/188):

[3] **Марр Н.Я.** Ани, с. 85–86; **Марр Н.Я.** Аркаун, монгольское название христиан в связи с вопросом об армянах-халкидонитах. Кавказский культурный мир и Армения (под. ред. П.М. Мурадяна), Е., 1995, с. 248.

scholars have shared his opnion[4]. At the same time, the further examination of the inscription on the building by Paruyr Muradyan allowed to find out that initially St. Gregory was built as an Armenian Apostolic Church[5] and only later was handed to the Chalcedonians, therefore its commissioner, Tigran Honents, was also a follower of the national church and was well known as a constructor or renovator of other Apostolic churches (St. Hripsime of the Kusanants monastery, Cathedral of Ani, Bekhents monastery)[6]. Unfortunately, the inscription gives no detail how the church passed to the Chalcedonians, however, the fact is obvious from its inner decorations as well as the construction of the columned porch and the chapel of the west side (these were not planned initially). Besides that the frescos were created when the church had already passed to the Chalcedonians. This fact is accepted both by historians and art scholars, and there is only some disagreement regarding the date when the frescos were created.

Summing up the opinions regarding the dating of the frescos, it should be mentioned that some of the scholars consider that the frescos of the church were created right after the construction of the church from 1215 to 1220 while the murals of the porch and the chapel were made in the second quarter of the century until 1250s (N. Okunev, N. Sichov, D. Gordeyv, V. Lazarev, L. Durnovo, S. Ter Nersesian, N. Thierry, A Kakovkin[7]). As another opinion claims, the decoration of

[4] **Орбели И.А.,** op.cit., p. 12, 126; **Амиранашвили Ш.Я.** История грузинского искусства, М., 1963, с. 114 et al.

[5] **Мурадян П.М.,** Строительство и конфессия церкви Тиграна Оненца по памятникам эпиграфики, «Պատմաբանասիրական հանդես» (hereinafter: ՊԲՀ), 1985, № 4, էջ 174–190; **Мурадян П.М.** Проблема конфессиональной ориентации церкви Оненца (краткий анализ источников и литературы. (Кавказ и Византия, 1987, № 5, с. 36–81).

[6] **Mahé J.-P.,** Le testament de Tigran Honenc': la fortune d'un marchand arménien d'Ani aux XIIe–XIIIe siècles, Comptes rendus des séances de l'Académie des Inscriptions et Belles-Lettres, 145e année, 2001, N. 3, p. 1320.

[7] **Окунев Н.** Город Ани, «Старые годы» (октябрь), СПб., 1912, с. 11; **Сычев Н.П.** Анийская церковь, раскопанная в 1892 г. (Христианский Восток, т. 1, вып. 2, СПб., 1912, с. 219); **Гордеев Д.П.** Отчет о поездке в Ахалцихский уезд в 1917 году. Росписи в Чуле, Сапаре и Зарзме, «Известия Кавказского историко-археологического института в Тифлисе» (hereinafter: ИКИАИТ), т. 1, Петроград, 1923, с. 9; **Лазарев В.Н.** История византийской живописи, т. 1, М., 1986, с. 145; **Дурново Л.А.** Очерки изобразительного искусства средневековой Армении, М., 1979, с. 152; **Der-Nersessian S.,** L'art Armenien (reprint). Paris, 1989. P. 164–165; **Thierry N. et M.,** L'Église Saint-Grégoire de Tigran Honenc' (1215), E.P.H.E., Ve Section Archéologies I, Louvain-Paris, 1993, p. 103–108; **Каковкин А.Я.** О датировке росписей храма св. Григория в Ани, его часовни и прит-вора (Византийский временник, 1987, т. 48, с. 108–115).

the church was carried out in 1250s and afterwards successively, the porch and the chapel (T. Toramanyan, P. Muradyan, A. Lidov[8]).

The fact that frescos of St. Gregory Church of Ani were created by Armenian-Chalcedonians is first of all established due to Georgian and partly Greek inscriptions[9]. It is known that Armenian-Chalcedonians being subject to Byzantine and later to Georgian Orthodox church used Georgian and Greek inscriptions from the confessional point of view, so the inscriptions were bilingual or trilingual[10]. This question has been addressed quite a lot in different studies devoted to Armenian-Chalcedonians[11]. At the same time, for those scholars who were almost unaware of the confessional belonging of the monument and particularly for those who had been involved only in the artistic examination of frescos, the Georgian inscriptions were a reason for considering the monument to be Georgian. It should also be added that not only the usage of the Georgian language but also the term "Georgian" (and its counterpart "Gurji", Georgian in Turkish) in Middle Age Armenia and its neighboring territories which were populated by Armenians, had a

[8] **Թորամանյան Թ.,** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Աշխատությունների ժողովածու Ա, Ե., 1942, էջ 159–163; **Lidov A.,** The Mural Paintings of Akhtala, Moscow, 1991, p. 5–6; **Мурадян П.М.** Строительство и конфессия..., с. 181–182; **Мурадян П.М.** Проблема конфессиональной ориентации..., с. 54, 56; **Лидов А.М.** Росписи монастыря Ахтала, История, иконография, мастера, М., 2014, с. 19.

[9] The incsriptions of frescos were read and translated by N. Marr, N. Sichov, D. Gordeyev, P. Muradyan. There are also records of Armenian inscriptions in the frescos of the church and the porch, a fact which today, is unfortunately impossible either to admit or deny, See **Texier Ch.,** Description de l'Arménie, la Perse et la Mésopotamie, Paris, 1842, p. 98.

[10] E.g. the frescos of the church N: 7 of Sabereebe (X c.), Adrianapolis Gospls (N: 887, St. Lasar, Venice, 1007), Khachen Gospls (N: 949, University of Chicago, beginning of XIII c.).

[11] **Марр Н.Я.** Надпись Епифания, католикоса Грузии (из раскопок в Ани 1910 г.), «Известия Императорской академии наук» (hereinafter: ИИАН), 1910, с. 1440–1441; **Марр Н.Я.** Аркаун, монгольское название христиан..., с. 227–231; **Մուրադյան Պ.Մ.,** Հայաստանի վրացերեն արձանագրությունները, Ե., 1977; **Շանդրովսկայա Վ., Բարթիկյան Հ.,** Հունահայկական արձանագրությամբ բյուզանդական արճճե կնիք Պետական Էրմիտաժի հավաքածուում, ՊԲՀ, 1991, № 1, էջ 122–128: **Арутюнова-Фиданян В.А.** «Повествование о делах армянских» (VII в.) и «Типик Григория Пакуриана» (XI в.): греческий язык армяно-халкидонитских памятников («Вестник Православный Свято-Тихоновский гуманитарный университет» (hereinafter: ПСТГУ), III, Филология, 2014, вып. 5 (40), с. 9–21); **Лидов А.М.** Росписи Ахталы и искусство армян-халкидонитов. Из истории Древнего мира и Средневековья, М., 1987, с. 121–136; **Հակոբյան Զ.,** Դավիթ-Գարեջի. Սաբերեեբի վանքի հայագիր որմնանկարները (X դ.), Բանբեր հայագիտության, 2013, № 2–3, էջ 150–151:

confessional meaning and was applied to identify the Armenian-Chalcedonians and their monuments[12].

The frescos of St. Gregory should be considered Armenian-Chalcedonian, especially given the fact that from the beginning until the third quarter of the 13th century there were more monuments with such bilingual inscriptions (Akhtala, Haghbat). The process of confessional revision of monuments during centuries which consequently results in the choice of the language of inscriptions is obvious in the case of another church of Ani – St. Minas, which was mentioned by N. Marr. Here N. Marr recorded two layers of frescos where under the plaster of the first one (dated to 1013) the scholar read a passage in Armenian, and on the upper layer the scholar found Georgian script on the scroll in Daniel's hand[13].

Speaking about the combination of different languages, it should be mentioned that there are no multilingual inscriptions in Georgia except for the Armenian-Chalcedonian monuments there, since the Georgian church is homogeneous in its sense. Whereas in Armenia where, in fact, there were both communities – Orthodox and Armenian Apostolic, the language is a kind of a marker[14]. If Armenian inscriptions in the frescos are proof that they belong to the national church (Holy Cross of Ahtamar 915–921, Bakhtaghek XIII c.), the bilingual and trilingual inscriptions testify their Armenian-Chalcedonian origin. As A. Lidov mentiond, in Armenia in XIII century, the Georgian and Greek inscriptions should be regarded as features of confessional rather than national belonging[15]. It is also grounded by the fact, that XIII century was a new period of flourishing of the Armenian-Calchedonian community.

The confessional relevance of the frescos is also decided taking into account a range of iconographic specifics. In the context of the church decoration the apse and the dome as the more sacred parts are of primary importance. So their

[12] A case in point is the "Georgian" church of Ani (in fact the name is not known), the conventional name of which (adopted by N. Marr as a working version) shows that it is an Armenian-Calchedonian building. It is proved by the lengthy inscription in Georgian on the Southern wall with a message from the Georgian Catholicos which ends with a line in Armenian. See **Марр Н.Я.** Надпись Епифания…, с. 1433; **Марр Н.Я.** Ани, таб. XLII; **Մուրադյան Պ.Մ.,** Հայաստանի վրացերեն…, էջ 35–37:

[13] **Մուրադյան Պ.Մ.,** Հայաստանի վրացերեն…, էջ 61–62:

[14] **Арутюнова-Фиданян В.А.** Армяне-халкидониты. Терминология (Вестник ПСТГУ, III. Филология, 2013, вып. 5 (35), с. 9–20).

[15] **Лидов А.М.** Искусство армян-халкидонитов, ИФЖ, 1990, № 1, с. 77.

decoration more than any part of the church is conditioned by the liturgical tradition and correspondence to the iconographic canon.

On the dome of St. Gregory church there is "Ascension of Christ" where the Savior raised up by four flying angels[16] is sitting on a rainbow. This scene in Eastern Christian tradition was initially placed in the conch of the apse and after iconoclasm was moved to the dome. Here Christ is represented in the composition of "Pantocrator" [17]. Usually the XI–XIII century Byzantine and its adjacent Orthodox churches follow this rule. We see the reflection of this iconography in XIII century Armenian-Chalcedonian churches – St. Gregory of Ani and Kirants (30–40s of XIII c)[18]. We can not know what the composition of other Armenian churches was since their domes have not survived but since the paintings of neighboring Georgia are available and in that sense their composition is different from those of Byzantine, the few Armenian samples are sufficient to prove that the scene of "Ascention" was typical of XIII century Armenian-Chalcedonian monuments as they exclusively followed the Byzanitine iconographic rule.

In the Georgian frescos of the period under question, it's not Christ depicted on the dome but the "Ascension of the Cross" (Ikorta, about 1172; Vardzia, 1184–1186; Udabno, the end of XII c.; Bertubani, about 1212, two in Davit-Gareji; Kintsvisi and Timotesubani, both in the first quarter of XIII c.[19]).

These two themes – Ascension of Christ and Ascention of Cross – are undoubtedly identical as far as their significance and sybolic value are concerned, whereas iconographically they bring out different traditions and application of different iconographic schemes.

---

[16] **Thierry N. et M.,** L'église Saint-Grégoire…, p. 24–25; **Каковкин А.Я.** О датировке росписей…, с. 110.

[17] **Лазарев В.Н.** Система живописной декорации византийского храма IX–XI веков; **Лазарев В.Н.** Византийская живопись, М., 1971, с. 98–99; **Лазарев В.Н.** История..., с. 63.

[18] **Дурново Л.А.** Фрески монастыря Киранц. Материалы из архива Л.А. Дурново, Е., 1990, с. 8. It should be mentioned that due to the collapse of dome in Akhtala the composition of the dome is unknown to us, and the church of Kobayri is a basilica without a dome.

[19] **Чубинашвили Г.Н.** Пещерные монастыри Давид-Гареджи. Очерк по истории искусства Грузии, Тбилиси, 1948, с. 78–79; **Вирсаладзе Т.** Основные этапы развития грузинской средневековой монументальной живописи, II Международный симпозиум по грузинскому искусству [отдельный оттиск], Тбилиси, 1977, с. 9; **Привалова Е.** Роспись Тимотесубани. Исследование по истории грузинской средневековой монументальной живописи, Тбилиси, 1980, с. 16; **Velmans T.,** La koinè grecque..., с. 685–700.

Thus, it can be claimed reference to the Byzantine rule was more commonplace in Georgian fescoes which can probably be explained by another, earlier tradition of the region. In this sense, the fresco of New Church in Tokali in Cappadocia (50s of X century)[20] or the similar compositions[21] of X–XI centuries of Tayk (Ishkhan, Khakhu[22]) are of siginificance.

In this regard, it is clear why in her research on frescos of Kirants N. Thierry attempted to restore the composition as "Ascention of the Cross" proceeding from the samples of Tayk[23] and those of Georgia which essentially differs from the scheme of "Ascention of Christ"[24] put forward by L. Durnovo with the scence. Taking into account the difference of iconographic compositions of domes between XIII century Georgian and Armenian-Calchedonian churches in the context of Orthodox tradition, it should be concluded that for Armenian-Chalcedonians the Byzantine iconographic scheme was of significance and played the role of a marker. The latter was carried out more consistenly in Armenia since there were two communities whereas in Georgia there was no such "must".

The next iconographic depiction is the scene of "The Eucharist" peculiar to Armenian-Calchedonians. According to the Byzantine iconography it considered one of the most important topics related to Orthodox liturgy. This is the very composition that we see in St. Gregory church of Ani as well as in other Armenian-Calchedonian frescos of Akhtala, Haghbat, Kobayr, Kirants[25]. "The Eucharist" highlights the depiction of its confessional belonging.

[20] **Thierry N.,** La Cappadoce de L'antiquité au Moyen Age. Brepols, 2002, p. 171, pl. 83.

[21] **Thierry N. et M.,** Peintures du Xe siècle en Géorgie méridionale et leurs rapports avec la peinture byzantine d'Asie Mineure, Cahiers archéologiques, 1975, vol. 24, p. 96–98.

[22] The usage in sculptures from VII–XI cc. of the "Ascension of Cross" may testify of the wide spread the composition in Transcaucasus (Jvari of Mtskheta, Ptghni). And according to the researchers, initially there was an image of the Cross in the domes of Ateni Sion (10–11th cc.) and the Holy Cross of Aghtamar (915–921). See **Дурново Л.А.** Очерки..., с. 149; **Амиранашвили Ш.Я.** История..., с. 160.

[23] **Тьерри Н.** Росписи церкви Киранца, 4-ый Международный симпозиум по грузинскому искусству [отдельный оттиск], Тбилиси, 1983, с. 2–3; **Thierry N.,** A propos de l'église de Kiranc: Rapport préliminare, Bedi Kartlisa, Revue de Kartvélologie, Paris, 1983, v. 41, p. 194–228.

[24] L. Durnovo's notes and sketches on deciphering this composition are grounded since the scholar had a chance to research the frescos in earlier period 1943 and 1957 in a better condition.

[25] **Каковкин А.Я.** Роспись церкви Григория..., с. 106; **Thierry N. et M.,** L'église Saint-Grégoire..., p. 25; **Лидов А.М.** Росписи монастыря Ахтала..., с. 68–71; **Дурново Л.А.** Очерки..., с. 149, 152; **Дрампян И.Р.** Фрески Кобайра, Е., 1979, с. 9–10, 11.

In the "Eucharist" the central position is occupied by the altar and the Tempietto, Christ is represented twice, the apostle's come up to Him and receive communion. This iconography has been affirmed as an obligatory composition of the Byzantine church, especially in Orthodox countries adherent to Byzantium. Unfortunately, in this case too it is impossible to draw comparisons with the Armenian samples[26] of the same age or earlier periods as it has been mentioned the latter have been badly preserved.

At the same time, the study of XIII century Georgian frescos shows that as in the case of the previous scene of "Ascention of Christ" here too there is some "deviation" from the Byzantine iconography. If in XIII century Armenian-Calchedonian frescos of Akhtala, St. Gregory of Ani, the Holy Cross of Haghbat, Kirants as well as in two churches of Kobayr the "Eucharist" is depicted in the central part of the apse, in regard to Georgian monuments of the same period it can be said that the composition is missing[27] or if it is presented then with considerable deviation. In this respect both St. Nicholas and Holy Virgin churches (first half of XIII c.) in Kintsvisi are unique.

In the first one the scene of "Eucharist" is devided into two parts and is "shifted" toward the side of the apse yielding its place to the figures of St. Nicholas and St. Selbestros of Rome[28], while in the church of Holy Virgin this setup is complemented with the image of Christ carrying the cross and with the scences of miracales of Christ[29], which is rare[30]. In the mentioned frescos, the combination of

[26] Perhaps another parallel might be drawn according to L. Durnovo. In the apse of St. Stepanos church of Kosh (second half of VII c.) the scholar saw the "Eucharist" with the double image of Christ and instead of wine and bread there was a scroll in His hand. See **Дурново Л.А.** Краткая история..., с. 11.

[27] **Babič G.,** Les programmes absidaux eu Géorgie et dans les Balkans entre de XI et XIII siècle, L'art Georgiana dal IX al XIV secolo, Barri, 1986, p. 123–124; **Лидов А.М.** Искусство армян-халкидонитов..., с. 77.

[28] **Didebulidze M.,** St. Nicholas in XIII century Mural Painting of Kintsvisi Church, Georgia, Iconographica. Rivista di iconografia medievale e moderna, VI, Firenze, 2007, p. 67–71.

[29] **Velmans T.,** Les fresques de l'église de la Vierge à Kincvisi. Une image unique de la Communion des Apôtres, Cahiers archéologiques, 1978, vol. 27, p. 147–161; **Velmans T.,** La peinture murale en Géorgie qui se rapproche de la règle constantinopolitaine. Le programme iconographique et le style (fin XII – deb. XIII s.), **Velmans T.,** L'art médiéval de l'Orient chrétien, Sofia, 2002, p. 175–189.

[30] The composition of the apse of Kintsvisi is unique especially for the cycle of the images ("Miracles of Christ"). The Calchedonian layer of the Holy Cross church in Haghbat is contemporary to Kintsvisi and which also has Christological scenes – "Annunciation", "Nativity", "Presenta-

the canonical Orthodox composition with other images as well as the split and shift from the central part of the apse testify that "Eucharist" did not have such fundamental role that was peculiar to Byzantine and Armenian-Calchedonian frescos[31]. Hence in this case too it can be claimed that the "Eucharist" did not have a crucial role in Georgian monuments.

The Fathers of Eastern church are depicted in the lower part of the apse of St. Gregory church. There are ten of them, devided on two sides of the central window; there are either scrolls or codices in their hands. The names are mentioned next to the figures[32]. They are: Basil the Great (of Ceaseria), John Chrysostom Peter and Athanasius of Alexandria, Nikolaos the Wonderworker, Selbestros of Rome[33], Leontius of Caesaria, Gregory the Parthian (Illuminator) and also his sons Aristakes and Vrtanes.

Six of the holy Fathers are known as bishops, theologists and founders of Eastern Church, they were among the first to be canonized and are the "pillars" of Church.

The inclusion of Gregory the Illuminator among the Fathers of the Church is quite ordinary. Being the forefather and the patron saint of the Armenian church, he was also canonized within the Ecumenical Church. It happened in IX century when by the order of Potios the Patriarch of Constantinople, the Life of Gregory was included in the Byzantine Menology of Simeon Metafrast[34] (the veneration day

---

tion of Jesus at the Temple" "Batpism" (see **Дурново Л.А.** Очерки…, с. 149, 152). However, in contrast to Kintsvisi, in the Holy Cross of Haghbat the scenes do not distrupt the established composition and are given in a separate row – below the "Eucharist".

[31] **Акопян З.А.** Особенности иконографии армяно-халкидонитских памятников (X–XIII вв.), ՊԲՀ, 2009, № 2–3, с. 167–185.

[32] **Муравьев А.Н.** Грузия и Армения, ч. II, СПб., 1848, с. 277; **Гордеев Д.П.** Отчет о поездке в Ахалцихский уезд в 1917 году. Росписи в Чуле, Сапаре и Зарзме, ИКИАИТ, т. 1, Петроград, 1923, с. 8; **Thierry N. et M.,** L'Église Saint-Grégoire…, p. 23.

[33] In Akhtala – there is another well-known Armenian-Calcheldonian monument of XIII century with the latin saints Selbestros and Clementos of Rome who are traditionally depicted in the apse of Byzantine church as well as with Ambrosios of Mediolan who was not one of the Church Fathers. Such highlight on Latin Fathers, according to A. Lidov, could be explained by the Church Union widely discussed in XII–XIII cc. and the active participation of Armenian-Chalcedonians in the discussion. See **Лидов А.М.,** Росписи Ахталы…, с. 82–84 (there – the appropriate bibliography).

[34] Patriarch Potios, one of the prominent religious leaders of Constantinople (50–80s of XI c.) gave a lot of importance to Gregory Parthian since the Early Middle Ages the veneration of the latter among Armenians, Georgians, Abkhazians, Albans, Syrians and Copts contributed to con-

is the 30th of September). These events greatly contributed to the worshiping of the Illuminator and the dissemination of his image in the Orthodox world. It should be mentioned that the image of St. Gregory are better known in the Byzantine (XI to XIV cc.)[35] and adjacent monuments (Old Russia, Bulgaria, Serbia[36], Georgia[37]) rather than in Medieval Armenian art[38]. However, referring to Vrtanes Kertogh's

---

tacts between Eastern Churches. That was the reason why the Illuminator's image appeared at the same time in St. Sofia in Constantinople (see **Պէրպէրեան Հ.,** Ս. Գրիգոր Լուսաւորչի խճանկարը Այա Սոֆիայի մէջ, Անդաստան, Փարիզ, 1958, № 8–9, էջ 113–15; **Mango C.,** Materials for the Study of the Mosaics of St. Sophia at Istanbul, Washington, 1962, p. 95–98; **Mango C, Hawkins E J.W.,** The Mosaics of St. Sophia in Istanbul. The Church Fathers in the North Tympanum, Dumbarton Oaks Papers, 1972, vol. 28, p. 1–41; **Der Nersessian S.,** Les portraits de Grégoire l'Illuminateur dans l'art byzantine, Études byzantines et arméniennes, t. 1, Louvain, 1973, p. 55–60) and relics of the Illuminator, St. Hrispime and St. Gayane are exposed to worship in St. Sofia (see **Ալիշան Ղ.**, Գիւտ նշխարաց Ս. Լուսաւորչին եւ Ս. Հռիփսիմեանց ի Կոստանդնուպօլիս, in: **Ալիշան Ղ.,** Հայապատում, մաս Բ, Պատմութիւնք Հայոց, Վենետիկ, 1901, էջ 263–265: **Der Nersessian S.,** Les portraits..., p. 57) In the times of Potios the Greek original of Agathangeghos appeared.

[35] The image of Gregory the Illuminator, who was called Gregory the Parthian or St. Gregory of Greater Armenia can be seen in the following Byzantine monuments: the mosaics of St. Sophia of Constantinople (circa 878, fallen), of Hosios Lucas (Phocida, Greece, XI c.), the murals of Panagia Ton Chalceon (Thessaloniki, 1028), of Nerezi (Macedonia, 1164), of the Virgin Mary Church of the Syrian Orthodox Monastery Vadi-al-Natrun (cirka 1200, Egypt); the mosaic of Holy Mother Pamakarista of Constantinopole (Fethiye Camii, Istanbul, 1315), of the mural of the Aphendikon Church of Brontochion Monastery (Mystras, Greece, first half of the XIV c.), as well as in the following manuscrips: Menologia of Basile II gr. 1613 and gr. 1156 (X c. and XI c., Vatican Library); Menologion gr. 586 (XI c., Marciana Library, Venice), two manuscripts – Barocc. 230 and gr. th. F1. (XI c. and XIV c., Biblioteca Bodleian, Oxford). See **Der Nersessian S.** Les portraits..., p. 55–60; **Сусленков В.Е.** Григорий Просветитель. Иконография (Православная энциклопедия, т. 13, с. 45–47).

[36] The image of Gregory the Illuminator can be observed in such frescos as the Saviour Church on Nereditsa (1198), the Churches of Theodoros Stratilate (1361) and St. Simeon (XIV–XV cc.), the Zemen Monastery St. John the Evangelist (1354, Bulgaria), the Saviour Church of Decani Monastery (Serbia, 1335–1380). A number of Russian icons with the image of St. Gregory are also known. See **Арутюнова-Фиданян В.А.** Православные армяне в северо-восточной Руси. Древнейшие государства Восточной Европы (Материалы и исследования 1992–1993 годы, М., 1995, с. 196–208); **Лазарев В.Н.** Искусство Новгорода, М.-Л., 1947, с. 36; **Каковкин А.Я.** Образ Григория Армянского в некоторых памятниках древнерусского искусства, ИФЖ, 1967, № 2, с. 167–168;

[37] St. Gregory's image is in Ateni Sion (fresco of X or XI cc.), in Betania, Samtavisi, Kazreti. See **Каковкин А. Я.,** О датировке ..., с. 111, примеч. 22.

[38] The earliest image of Gregory the Illuminator in Armenian art is known to be on the Eastern façade of Aghtamar Church, it is also known to be on the patterns of Cilician applied art.

famous treatise "Concerning the Iconoclasts "[39] we can confirm that in the Early Medieval Armenian art there was a tradition of depicting the image of the Illuminator since the author speaks on the images of St. Gregory and other saints in VII century churches and that period matches with the time when the worshiping of the national saint reached its hight[40].

However, if the Armenian frescos have not been preserved well there are samples of sculpture[41]. In any case it is beyond a doubt that the Illuminator's image in the Middle Ages was more familiar to the Orthodox environement. So it can be claimed that the Illuminator's image in the Church of Ani as well as in other Armenian-Calchedonian churches had a dual meaning both as a national and Ecumenical saint. It is important to remember that the Armenian-Chalcedonians considered themlsevles as the successors of the mission of the Illuminator and Mashtots and were their followers[42].

If the Illuminator's images of the Church in Ani can be interpreted from the perspective of Orthodox traditions then it is absolutely different when we see Gregory's sons Aristakes and Vrtanes among the Church Fathers. Their images in the frescos of Ani are unique. It is known that Aristakes and Vrtanes inherited successively the chair of Catholicos from Gregory the Illuminator[43], they are among the saints of the Armenian church with their days of reverence and has never been

---

[39] **Der Nersessian S.,** Une Apologie des Images du septième siècle, Études byzantines et arméniennes, t. 1, Louvain, 1973. p. 381, 392; **Քյոսեյան Հ.,** Դրվագներ հայ միջնադարյան արվեստի աստվածաբանության, Ս. Էջմիածին, 1995, էջ 125:

[40] **Марр Н.Я.** Крещение армян, грузин, абхазов и аланов святым Григорием, «Записки Восточного отделения императорской Академии наук» (hereinafter: ЗВОИАН), 1905, т. 16, с. 154–155; **Мурадян П.М.** Кавказскаий культурный мир .., с. 12–13; **Арутюнова-Фиданян В.А.** Повествование..., с. 56, 206–207.

[41] It is considered that Gregory the Illuminator's image is on the monument of Odzun (VII c.) (see **Ազարյան Լ.,** Օձունի և Բրդաձորի կոթողները, ՊԲՀ, 1965, № 4, էջ 214–215; **Հակոբյան Զ.,** Օձունի կոթողի պատկերների մեկնաբանման հարցի շուրջ, Էջմիածին, 2005, Ա (հունվար), էջ 79–80), as well as in the "heavenly garden" of Zvartnots' (see **Мнацаканян С.Х.** Звартноц. Памятник армянского зод-чества VI--VII вв., М., 1971, с. 54; **Հակոբյան Զ.,** Զվարթնոցի խորհրդաբանական կերպարը (Պատկերների մեկնաբանման հարցի շուրջ), Էջմիածին, 2006, Զ (հունիս), էջ 84):

[42] **Мурадян П.М.** Кавказский культурный мир ..., с. 20; **Арутюнова-Фиданян В.А.** Повествование..., с. 58.

[43] Aristakes (264–333) and Vrtanes (262–341) were famous as religious leaders fighting against pagans. They are remembered on the holiday of "Gregory the Illuminator's Son and Grandsons". See **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Ե., 1981, էջ 239; **Օրմանյան Մ.,** Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 109–110:

venerated by other churches even though the Byzantine sources mention Aristakes as a pariticpant of the first Ecumenical Council (325, Nicea)[44].

If according to Armenian-Chalcedonians, they had inherited their faith from Gregory and therefore had put importance to the national tradition, then as A. Lidov mentions it is quite possible that Aristakes and Vrtanes were canonized as local saints (the "Last Judgement" sculpture from Horomos zamatun) by the Armenian-Calchedonians[45]. The presence of Aristakes and Vrtanes in the rank of Church Fathers can be explained either by Byzantine or Georgian traditions but only by Armenian national, in this case by the strict iconographic tradition of the Armenian-Calchedonians.

The last saint in this series is Leontius of Caesaria whose image should also be linked with Gregory and the Armenian historical tradition. Though Leontius participated in the first Ecumenal Council and the Archbishop of Caesaria, however he was not canonized as a saint of Ecumenical Church and of course has not been ranked among the Church Fathers[46].

At the same time, it is known that the Illuminator received the consecration from Leontius in Caesaria which provides ground to claim that depicting Leontius in the rank of the Church Fathers in such high esteem is preconditioned by the historical tradition and is connected with the Armenian environement. The scene where Leontius of Caesaria ordains the Illuminator in the frescoes of the Tigran Honents Church confirms the fact. So, it can be concluded that the depiction of Aristakes, Vrtanes and Leontius of Caesaria in St. Gregory Church is preconditioned by the Armenian tradition and claims that the monument was created in Armenian-Calchedonian environment.

This concept is confirmed once again in the wall painting of the church with the life story of Gregory the Illuminator which is unique. According to some scholars, the emergence of the vast hagiographical cycle of Gregory in the Honents Church was preconditioned by the strong interest for local saints highly developed in XII–XIII centuries. The hagiographical cycle dedicated to St. Gregory in Ani is

[44] **Ղազարյան Գ.,** Հայոց մասնակցությունը չորրորդ Տիեզերաժողովին, Բանբեր Երևանի համալսարանի (հայագիտություն), Ե., 2016, № 2, էջ 21:

[45] **Лидов А.М.** Росписи Ахталы..., с. 80–81.

[46] Although Leontius of Cesaria does not have a veneraton day, it is worth mentioning that Armenian Apostolic and Orthodox churches have a veneration day for the fathers of church who took part in the Ecumenical council, and it includes Leontius as well. I express my gratitude to G. Kazaryan for consultations on theological and hagiographical questions.

unique in the Eastern Christian art of the period. The cycle being presented in two rows, occupies the Western part of the church as well as the Western part of the Southern and Northern walls including Westward façades of the North-Western and South-Western pylons. The scenes are accompanied by inscriptions thus making the subjects quite clear. Generally, they are represerented in historical chronology though there are some "deviations" which aim to highlight the more important topics placing them in the visible parts of the cycle. It consists of 18 scenes which present the key events of the Illuminator's life. The six of them refer to the tortures[47], two refer to the holy Virgins (including St. Nino/Nune) [fig. 8][48] and the tenth represents the event of adoption and establishing of the new faith in Armenia[49]. Even from the selection of the topics it is obvious that except for the tortures the majority of the images (10 scenes) are dedicated to the history of the adoption of Christianity in, Armenia thus underlining the national and religious milieu where the cycle was created.

From this perspective, the interpretations of some scholars of the cycle are unacceptable. We particularly mean N. Thierry's conclusions according to which a) the frescos of St. Gregory Church of Ani were created by a Georgian painter and were intended for the Georgian community of Ani[50] (?) b) the emergence of the scene where Nino is having a Vision is perhaps the idea of the Georgian painter or a compromise with the customer[51]. The generalizations of E. Eastmond regarding the factare not grounded either. a) The cycle of Gregory is more centered on the Illuminator himself rather than on Tiridates or the Converstion of Armenia, b) it is meant to popularize the Illuminator's veneration rather than symbolize the Christianization of Armenia c) The history of Christianization of Armenia loses its

---

[47] Those are "St. Gregory in Front of Tiridat", "St. Gregory Hanged Upside Down", "St. Gregory's Feet Are Being Nailed", "Whipping of St. Gregory Hanged Upside Down", "St. Gregory Is Being Taken to Artashat", "St. Gregory in a Pit of Snakes".

[48] Those are "The Martyrdom of St. Virgins", "The Miraculous Appearance of the Life-giving Pillar to St. Nino".

[49] Those are "St. Gregory's Liberation from the Pit", "The Appeal of People to St. Gregory to Release Them from the Curse", "St. Gregory's Vision", "King Tiridates, kings of Abkhazia, Georgia and Albans Come to Meet St. Gregory", "St. Leontius of Caesaria Ordains St. Gregory", "St. Gregory and Tiridates Meet in Bagavan", "Baptism of Tiridates and His Relatives", "St. Gregory Ordains the First Twelve Armenian Archbishops", "Tiridat Appeals to St. Gregory Who had Left for Mount Sepuh", "St. Gregory in the Cave of Man".

[50] There is no information about the activity of Georgian community in Ani in the sources.

[51] **Thierry N.,** The Wall Painting..., p. 69.

primary significance since parallel with St. Gregory's Vision there is also St. Nino's Vision – the story of Converstion of Georgia[52].

However, it is clear that the inscriptions in Georgian served a proof for both authors but at the same time it is obvious that they contain the pivotal events of Armenian history which are more important than the language of the inscriptions. Proceeding merely from the scenes of the Life of Gregory it can be assumed that the second important character is Tiridates the Great who is depicted at least in 5 scenes[53], as well as his sister Khosrovdukht. In the only image which depicts the Caucasian – the Georgian, Abkhaz, Alan kings [54] going forward to the Illuminator coming from Caesaria, the Armenian king Tiridates leads the procession. Taking these details into consideration it is hard to imagine that the compositions were a product of not Armenian but that of a mixed Armenian Georgian environment since the Armenian king is in the center of the events and these are the key events of the Armenian history.

To interpret the cycle properly it is important to notice that according to the Medieval tradition, St. Gregory was a pan-Caucasian illuminator[55] as it is illustrated in the Greek and Arab versions of the Life of the Illuminator[56].

---

[52] **Eastmond A.,** "Local" Saints ..., p. 734, 736.

[53] Those are "St. Gregory in Front of Tiridates", "King Tiridates, kings of Abkhazia, Georgia, Albania Come to Meet St. Gregory", "Tiridates Meets St. Gregory in Bagavan", "Baptism of Tiridates and His Relatives", "King Tiridates Appeal to St. Gregory Who had Left for Mount Sepuh".

[54] According to Arabic and Greek versions of Agathangelos' History, as well as according to Khorenatsi, Pavstos Buzand, Draskhanakertsi, Gandzaketsi, Arsen Sapareli and Juansher Gregory the Illuminator sent preachers and monks to Georgia and lands of Laz and Abkhaz and baptized their kings in the Aratsani. The Illuminator ordained his grandson Gregory as Archbishop of Georgians and Albans. See **Օրմանյան Մ.,** Ազգապատում, հ. Ա, էջ 107–108; **Մուրադյան Պ.Մ.,** Վրաց եկեղեցի, Քրիստոնյա Հայաստան, Ե., 2002, էջ 986:

[55] **Ղազար Փարպեցի,** Հայոց պատմություն և Թուղթ Վահան Մամիկոնյանին (քննական բնագ. Գ. Տեր-Մկրտչյանի և Ստ. Մալխասյանի, աշխարհաբ. թարգմ. և ծանոթ. Բ. Ուլուբաբյանի), Ե., 1982, էջ 110–113; Обращение Грузии (пер. с древнегруз. Е.С. Такайшвили, исслед. и коммент. М.С. Чхартишвили),. Тбилиси, 1989, с. 11,18; **Мурадян П.М.** Кавказский культурный мир…, с. 9–20.

[56] **Марр Н.Я.** Крещение армян, грузин..., с. 63–211; **Garitte G.,** Documents pour l'étude du livre d'Agathange. Vatican, 1946; **Բարթիկյան Հ.,** Ագաթանգեղոսի Պատմության հունական..., ; **Мурадян П.М.,** Кавказский культурный мир..., с. 11–12; **Winkler G.,** Our Present Knowledge of the History of Agat'angelos and its Oriental Versions, REArm, 1980, t. 14. p. 125–141.

Regarding Nino's Vision depicted in the cycle, the following should be mentioned. St. Nino's topic is very harmonious and logical in this story and cannot "diminish" either the significance of St. Gregory's Vision or the role and meaning of the life by any means. It cannot "alter" it's ideological base.

This fact is preconditioned by ecclesiastical tradition. First, it should be mentioned that St. Nino is a saint with her veneration day also in the Armenian environement[57], because according to her life, she was one of the virgins with Hripsime who had joined them from Rome to Armenia and from here by "heavenly instruction" went to Georgia for preaching[58]. Movses Khorenatsi's information about St. Nino dates much earlier than Georgian sources. There he mentions the erecting of the cross of Christ by the saint in Mtskheta[59]. According to her Life in Georgia, she was reared by an Armenian nun from Dvin and spoke Armenian[60], which is quite a significant fact by itself.

The references of St. Gregory and St. Nino's images and their lives have deep historical roots. According to the life of the Saint and the history of Christianization of Georgia, St. Nino's preaching covered the territories stretching to the North of the river Kura and what lay to the South was connected with the name of Gregory and this brought to the intermingling of their veneration in the Early Middle Ages[61].

Only after the final split of the two Churches which in fact occurred at the beginning of VIII century[62], Nino became the sole Illuminator of Georgia and St. Gregory that of Armenia. However, for Orthodox Armenians, who have always

---

[57] The Armenian Church celebrates the commemoration day of St. Nune (Nini) and St. Mane next Tuseday of the "Holiday of St. Echmiadzin Cathedral". See **Գալուստեան Շ.,** Համաքրիստոնէական սուրբեր, Ե., 1997, էջ 186–188:

[58] **Ակինեան Հ.Ն.,** Քրիստոնեութեան մուտքը Հայաստան և Վրաստան, Վիեննա, 1949:

[59] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն..., էջ 231–232:

[60] **Մելիքսեթ-Բեկ Լ.,** Վրաց աղբյուրները..., էջ 172; Обращение Грузии..., с. 16; Картлис Цховреба, **Леонтий Мровели,** Обращение Грузии святой Нино, Тбилиси, 2008, с. 48.

[61] **Мурадян П.М.** Кавказский культурный мир..., с. 10–11; **Մուրադյան Պ.Մ.,** Վրաց եկեղեցի..., էջ 986:

[62] The question of split of Armenian and Georgian Churches started in 608. However, during the further political developments, the council of Karin and the activities of several successive pro-Byzantine Catholicoses postponed that process for almost a century. And only at the beginning of VIII century the separation of the churches was realized and was expressed by several key events; the council of Manazkert (726), a new "national" version of St. Gregory's Life where he is already mentioned as only the Illuminator of Armenia appeared, and it was followed by the history of conversion of Georgians headed by Nino.

referred to the roots of the Transcaucasian Church, the parallel of the stories of the saints was traditional and during the rule of the Zakarians, when Orthodox Armenians were subject to the Georgian Church, it acquired a special significance[63].

Although St. Nino became the only Illuminator of Georgia, the cycle depicting her life did not find wide acceptance in Georgian monuments; as a rule, the saint is depicted with other women and even not always. And the only example where St. Nino's life is represented in 4 scenes including the Vision is the fresco of the main Church of Udabno Monastery of Davit-Gareji which dates back to 1272–1289[64] and is built later than the Chalcedonian samples of Ani. It is also significant that in Udabno we witness the images of Hripsime and the accompanying virigns[65] since that monastery in particular was greatly renowned among the Armenians[66]. Again, refering to the Armenian-Calchedonian monuments, it should be mentioned that a cycle depicting St. Nino's life (4 scenes) used to be in Kirants Monastery[67] and there is an image in Akhtala[68].

The scene depicting Nino which is part of the cycle is inscribed as "St. Nino; Women who met St. Nino"[69], but in its content, it is in fact "the miraculous Vision of the Lifegiving pillar" as A. Kakovkin suggests to name the scene[70].

---

[63] There is another circumstance that attaches importance to St. Nino's story in the Chuch of Ani. According to historical data, St. Nino's cross was brought to Armenia by the efforts of St. Shushanik and the hermit Andreas and in 1098 - to Ani by the order of the Catholicos Barsel I. Nino's cross remained in Ani until 1239 when it was again taken back to Mtskheta upon the request of the Queen of Georgia Rusudan. See **Չամչյան Մ.,** Պատմութիւն հայոց, հ. Բ, Վենետիկ, 1784, էջ 550–551:

[64] **Амиранашвили Ш.Я.** История грузинской монументальной живописи, т. 1, Тбилиси, 1957, с. 53.

[65] St. Hripsime's image is also in the fresco of refectory of the Lavra of the Davit-Gareji monastery. See **Мурадян П.М.** Армянская эпиграфика Грузии..., с. 177.

[66] Armenian toponyms and a number of records, the majority of which are in monasteries of Udabno and Bertuban left by the pilgrims up to XIX century, are the evidenc of living Armenians in the neighborhood of Davit-Gareji and attending the complex. But the most interesting of all are some details about the founder of the monastery Davit Garejeli. Firstly, according to his Hagiography as well as St. Nino he spoke Armenian.

[67] **Дурново Л.А.** Фрески Киранц..., с. 22.

[68] **Лидов А.М.** Росписи монастыря..., с. 152.

[69] Translatoin by P. Muradyan: See **Мурадян П.М.** Проблема конфессиональной..., с. 63.

[70] **Каковкин А.Я.** Сцена «Чудесное явление Животворящего столба» в росписи храма Григория (1215 г.) в Ани (Zograf, 1989, № 20, с. 2).

St. Nino's Vision in Honents harmoniously adds to the story of St. Gregory both in the artistic sense and symbolism since both these scenes are the largest in the cycle, are located not far from each other so that they are perceived in parallel, their concepts are identical (the protagonist is in the center and the light is shed from above). The story lines of the stories are also identical – the pillar going down washed in the light of God[71].

This "sameness" is preconditioned by the fact that the community member to whom the frescos were addressed perceived both of those events as inseparable national Christian traditions, where St. Nino is represented as the spiritual heir of Gregory the Illuminator and the follower of the works of apostles while the revelation of the pillar is a symbol of devine providence and victory[72] which intermingles those events with the Christendom[73].

The examination of inscriptions also proves that the frescos were created by Armenian-Chalcedonians. Analyzing some of the Georgian inscriptions of the Church of St. Gregory, which refer to the Illuminator's life and which are the most extensive, P. Muradyan has discovered a number of very important peculiarities. They are the grammar and syntactic errors and mistakes as well as a considerable amount of Armenianisms which let us assume that the parts taken from the Life are translated from the Armenian original, it is even beyond doubt that the Georgian version of the Life was also known[74].

It is worth mentioning that in 1213 Tigran Honents gifted "Saint Gregory's Book…"[75] to the Cathedral of Ani and it may be suggested that this book was the source both for the hagiographical cycle and for its explanatory inscriptions.

---

[71] **Каковкин А.Я.** Сцена «Чудесное явление…, с. 2–4; **Лидов А.М.** Видение св. Нино в росписи церкви Тиграна Оненца в Ани. Институт истории археологии и этнографии им. И.А. Джавахишвили, XXIII научная сессия молодых ученых (15–17 ноября 1988), Тбилиси, 1988, с. 68–70.

[72] Pillar is one of the famous symbols of the Bible. Pillar, firy pillar or a pillar covered in smoke as symbols of divine presence are observed in Exodus (Exod. 13:21); Apostoles and saints are called pillars of church (Mat. 16:18; Gal, 2:9, Rev, 3:12).

[73] **Каковкин А.Я.** Заметки об особенностях житийного цикла Григория Просветителя в церкви Тиграна Оненца, ՊԲՀ, 1990, № 2, с. 236; **Каковкин А.Я.** Роспись церкви Григория…

[74] **Мурадян П.М.** Армянская эпиграфика Грузии…, с. 62–66; **Мурадян П.М.** Проблема конфессиональной…, с. 187–189.

[75] **Мурадян П.М.** Армянская эпиграфика Грузии…, с. 52; **Мурадян П.М.** Строительство и конфессия…, с. 180.

Coming back to the frescos proper, it should be mentioned that of course the fact that the frescos of Tigran Honents have stylistic similarities chronologically close to Georgian murals is acceptable, and this is surely a subject of a different study and is considered as one of the artistic peculiarities of the monument. But we also believe it is important to highlight that for any monument the local cultural environement, customer and the community it is addressed to are of critical importance since these factors are the prerequisites of the ideology of the monument.

Even in case of inviting artists from Georgia to make the frescos of St. Gregory Church which is quite possible, it cannot essentially change the national belonging of the church. Surely there are quite many samples of Armenian or Georgian monuments similar to Byzantine (for example the Armenian Gospel of Trabizon, XI c.; the mosaics of Gelati Monastery in Georgia, 1125–1130) or created beyond the borders of the motherland or under the significant influence of the Byzantine prototypes, however, those monuments are not characterized as "Byzantine" but merely testify the active cultural and artistic relations and the fact of creating some environement which is vividly expressed in the frescos of the Church of Ani under question.

That is the reason why it is impossible to interpret the frescos of the Honents Church proceeding only from one cultural tradition; on the one hand it incorporates the leading artistic trends (Byzantine, Georgian) and on the other hand traits of national identity which determines the belonging of the church. Thus, the frescos of St. Gregory Church of Ani is an Armenian-Chacledonian monument with its vividly expressed national-confessional features[76].

[76] **Arutjunova-Fidanyan V.A.,** Les Armeniens chalcedoniens en tant que phenomena culturel de l'Orient chretien, Atti del quinto simposio international di arte armena 1988, Venezia, 1992, p. 463–47; **Arutjunova-Fidanjan V.A.,** The Ethno-Confessional Self-Awareness of Armenian Chalcedonians, REArm., 1988–89, t. 21, p. 345–359.

ՀԱՅ-ՔԱՂԿԵԴՈՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԻ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԱՆԻԻ ՍԲ. ԳՐԻԳՈՐ (ՏԻԳՐԱՆ ՀՈՆԵՆՑ) ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐՈՒՄ

ՀԱԿՈԲՅԱՆ Զ.

Ամփոփում

Անիի Տիգրան Հոնենց եկեղեցին կառուցվել է 13-րդ դարի սկզբին: Եկեղեցու որմնանկարների պատկերագրությունը ունի բյուզանդական ուղղվածություն, իսկ տեսարանները ուղեկցվում են վրացերեն և հունարեն մակագրություններով: Այդ իսկ պատճառով ոմանք փորձում են ներկայացնել դրանք վրացական արվեստի համատեքստում: Որմնանկարների մի քանի կարևոր տեսարաններ արված են բյուզանդական կանոնի համաձայն, որոնք միևնույն ժամանակ հայտնի չեն վրացական նույն շրջանի հուշարձաններում: Բացի այդ, այստեղ առկա են կերպարներ, որոնք կապված են հայոց պատմությանը: Այստեղ առկա է Գրիգոր Լուսավորչին նվիրված փարքը (18 տեսարան)՝ Հայաստանի դարձի պատմությամբ և Տրդատ թագավորի քանիցս կրկնվող պատկերմամբ, որ բացառվում է վրացական հուշարձանի պարագայում: Վրացական վարկածը չի հաստատվում նաև Սբ. Նինոյի տեսիլքի տեսարանի առկայությամբ, քանի որ 13-րդ դարի վրացական պատկերաշարերում այն հայտնի չէ, մինչդեռ այդպիսի շարքով այն հանդիպում է հայ-քաղկեդոնական մեկ այլ հուշարանում՝ Կիրանցում:

ОТРАЖЕНИЕ АРМЯНО-ХАЛКИДОНИТСКИХ ТРАДИЦИЙ ВО ФРЕСКАХ ЦЕРКВИ СВ. ГРИГОРИЯ (ТИГРАНА ОНЕНЦА) В АНИ

АКОПЯН З.

Резюме

Церковь Тиграна Оненца в Ани была построена в начале XIII в. Иконографическая программа ансамбля в целом следует византийской традиции, а сцены имеют грузинские и греческие надписи, в силу чего ряд

специалистов рассматривают их в контексте грузинского искусства. Однако некоторые важные сцены ансамбля соответствуют византийскому канону, но в то же время они не характерны для грузинских памятников данного периода. Кроме того во фресках присутствуют образы, которые связаны с армянской историей. К примеру, в житийном цикле Св. Григория (18 сцен) отражены события, связанные с принятием христианства в Армении, а также многократно повторяется изображение царя Трдата, что было бы весьма странно для грузинского памятника. В пользу грузинской версии не говорит и присутствие сцены Видения Св. Нино, так как в грузинских ансамблях XIII в. житийный цикл Просветительницы Грузии практически не известен, но он есть в другом армяно-халкидонитском ансамбле – во фресках Киранц.

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅ ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ

ԱՊՐԵՍՅԱՆ Ա.
An-Apresian@mail.ru

Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը արվեստի կոթող է՝ պայմանավորված բովանդակության և ձևի ներդաշնակությամբ, լեզվի պատկերավորությամբ, բանաստեղծական արտահայտչական ձևերով և միջոցներով, տաղաչափական համակարգի առանձնահատկությամբ, և, իհարկե, հարուստ բառաշխարհով: Նարեկացու նման հանճարեղ ստեղծագործողի երկում բառն առավել կարևոր նշանակություն ունի, քանի որ «հեղինակի բանաստեղծական խոսքի վարպետության հետ է կապված նրա պաշտամունքն ու ժողովրդականությունը»[1]: Նարեկացին նաև մեր առաջին բանաստեղծն է, որ ճոխ, փայլուն լեզվով գրելու գերազանցությունը նվաճեց պատմիչներից[2]: Հետևաբար, կարևոր էր հեղինակի հարուստ և բազմաձև բանաստեղծական բառաշխարհը ստեղծել նաև թարգմանություններում:

«Մատեան ողբերգութեան» երկի բառաշխարհը փորձել ենք քննել Մկրտիչ Խերանյանի և Վազգեն Գևորգյանի աշխարհաբար թարգմանություններում: Մկրտիչ Խերանյանի՝ «Մատեանի» արևելահայերեն չափածո թարգմանությունը լույս է տեսել Երևանում 1960 թ.: Իսկ արդեն 1979 թ. Երևանում «Մատեանը» և տաղերը՝ դարձյալ արևելահայերեն չափածո տարբերակով, հրատարակվել է Վ. Գևորգյանի թարգմանությամբ: Մինչ այս՝ լույս էր տեսել

[1] **Առաքելյան Վ.**, Նարեկացու լեզուն և ոճը, Ե., 1975, էջ 231:
[2] **Մկրյան Մ.**, Գրիգոր Նարեկացի, Ե., 1955, էջ 239–240:

«Ծաղկաքաղը» (1970 թ., Երևան), որտեղ Վ. Գևորգյանն ընդգրկել էր իր կատարած՝ «Մատեանի» մի քանի հատվածի թարգմանությունը: Այդ հատվածները թարգմանիչը վերամշակելուց հետո ամփոփել է «Մատեանի»՝ 1979 թ. հրատարակության մեջ:

Գ. Նարեկացու երկն ունի նաև այլ աշխարհաբար թարգմանություններ: Առաջինը Արշակ Չոպանյանն է «Մատեանից» մի քանի հատված թարգմանել և հրատարակել «Ծաղիկ» հանդեսում 1895 թ.: Իսկ արդեն ամբողջական արևմտահայերեն արձակ տարբերակով «Մատեանը» լույս է տեսել Միսաք Գոչունյանի թարգմանությամբ Կ. Պոլսում, 1902 թ.: 1926 թ. Գ. Նարեկացու երկն ունեցել է արևմտահայերեն երկու թարգմանություններ՝ մեկը Կ. Պոլսում՝ Գարեգին եպիսկոպոս Խաչատուրյանի թարգմանությամբ, մյուսը՝ Կահիրեում՝ Թորգոմ եպիսկոպոս Գուշակյանի արձակ թարգմանությամբ: Ուշագրավ է այն, որ թարգմանիչներին երբեք չի լքել իրենց թարգմանությունները կատարելագործելու ցանկությունը: Նրանք ժամանակ առ ժամանակ անդրադարձել են «Մատեանի» թարգմանություններին, վերանայել այն, փորձել նորովի հասկանալ և թարգմանել: Այսպես, Գարեգին Խաչատուրյանը, չգոհանալով իր առաջին թարգմանությամբ, 1948 թ. Բուենոս Այրեսում հրատարակել է «Մատեանի» նոր չափածո թարգմանությունը՝ գրաբար բնագրի հանդիպադրումով:

«Մատեանի» նշված աշխարհաբար թարգմանություններն, իհարկե, կարևոր են նարեկացիագիտության համար, սակայն դրանք առանձին քննություն են պահանջում:

«Մատեանն» աշխարհաբարով արտահայտելու համար թարգմանիչը պետք է ոչ միայն փայլուն իմանա բնագրի և այն լեզուն, որով թարգմանում է, այլև հեղինակի ապրած և ստեղծագործած ժամանակաշրջանը, նրա կողմից այդ երկը ստեղծելու նպատակը, միջավայրը, դարաշրջանի մարդկանց և նրանց սովորույթները: Այսպիսով, եթե համարենք, որ բնօրինակն իր այս բոլոր առանձնահատկություններով թարգմանչի համար նյութ է՝ ստեղծագործական մշակման համար, ուստի, ըստ թարգմանության տեսաբան Իրժի Լևիի, թարգմանությունից պահանջվում է՝ *1. բնագրի ըմբռնում, 2. բնագրի մեկնաբանում, 3. բնագրի վերարտադրում*[3]:

1. Բնագրի ըմբռնում:

[3] **Левый И.** Искусство перевода, М., 1974, с. 59.

Բնագրի ըմբռնման կամ կանխահասկացման համար թարգմանչից նախ և առաջ ակնկալվում է «տեքստի բառացի կամ բանասիրական ընթերցում»[4], քանի որ շատ սխալներ հաճախ առաջանում են բնագիրը ոչ լավ ընթերցելուց: Թարգմանության տեսաբաններ (Լևի, Ֆյոդորով, Ռեցկեր, Գարբովսկի) անդրադարձել են թարգմանչական սխալներին. դրանք տեղի են ունենում՝

Ա. Համանունների հեփևանքով.

«Մատեանի» Զ գլխում Գ. Նարեկացին գրել է.

Ահա **կաթիլ մի կաթին** քումդ կուսութեան,

Յանձն իմ անձրեւեալ, կենաց ինձ զաւրէ[5]:

Մեկնիչները նշված հատվածում «*կաթիլ մի կաթին*»-ը հասկացել են «*կաթի կաթիլ*» իմաստով՝ «... մի միայն կաթիլ կուսական ստեանցդ ցօղեալ ի վերայ իմ, բաւական է ասէ՝ կեանս տալ ինձ նուաղեցելոյս. խնդրուած մի ևեթ կուսական գթութեանդ զօրէ առնուլ յայս կեանս վասն իմ կամ կուսական վարուցդ մի միայն առաքինութիւն յանձն իմ կերպարանեալ՝ բաւական առ ի կեանս է ինձ»[6]: Այս իմաստով են հատվածը ներկայացրել նաև թարգմանիչները.

Ահա՛ **կաթիլ մի** կուսությանդ **կաթից**

Մեջս անձրևելով՝ կյանք է տալիս ինձ (Մ. Խերանյան, էջ 345),

Ահա **մի կաթիլ** կուսական **կաթիդ**

Մեջս անձրևելով՝ կյանք է տալիս ինձ (Վ. Գևորգյան, էջ 485):

Մինչդեռ «*անձրեւեալ*» բառն օգնում է հասկանալ այն գաղափարն ու պատկերը, որը ստեղծել է հեղինակը՝ նկատի ունենալով «*կաթիլի կաթիլը*», որը գործածվել է «*չնչին կաթիլ*» իմաստով, որը, հակադրություն ստեղծելով, նաև հզորացրել է տվյալ հատվածի գաղափարը[7]: Այս իմաստով է կապակցությունը հասկացել Զուլալ Գազանճյանը, ով «Մատեանից» որոշ գլուխներ է թարգմանել և հրատարակել.

Թէ կուսութեանդ **չնչին կաթիլը**

Վրաս անձրեւէ՝ բա՛ւ է որ ապրիմ[8]:

---

[4] **Левый И.**, նշվ. աշխ., էջ 60:

[5] **Գրիգոր Նարեկացի**, Մատեան ողբերգութեան, աշխատասիրությամբ՝ **Խաչատրյան Պ.** և **Ղազինյան Ա.**, Ե., 1985, էջ 572 (այսուհետև՝ ՄՈ և էջը):

[6] **Աւետիքեան Գ.,** Նարեկ աղօթից, համառօտ եւ զգուշաւոր լուծմամբք բացայայտեալ միանգամ եւ այժմ երկրորդ անգամ յաւելուածով, Վենետիկ, 1827, էջ 425–426, ծնթ. 15 (այսուհետև՝ **Աւետիքեան Գ.**, Նարեկլուծ):

[7] **Գազանճեան Զ.,** Հատընտիր հայ հին բանաստեղծութեան, հ. Ա, Վենետիկ, 1998, էջ 387:

[8] Նոյն տեղում:

Բ. Համատեքստի ոչ ճիշտ ընկալման դեպքում.

ա) երբ բառը ներառվում է նախադասության կամ տեքստի ոչ ճիշտ հատվածում կամ ստեղծագործության իրական համատեքստում (իրականության չհասկացվածություն): Սա տեղի է ունենում այն ժամանակ, երբ թարգմանիչը, անտեսելով բառի՝ տվյալ հատվածում ունեցած իմաստը, օգտագործում է բառարանային համարժեքը՝ հաշվի չառնելով, որ «բառարանային ճշգրիտ թարգմանությունը դեռ չի վկայում տեքստի ճիշտ ընկալման մասին»[9]:

«Մատեանը» գրված է միջնադարի շնչով ու ոգով, հետևաբար նրանում հանդիպում են այնպիսի բառեր, կապակցություններ, որոնք կամ բացակայում են բառարանում, կամ ճիշտ չեն մեկնաբանված, կամ մեկնաբանված չեն այն իմաստով, ինչ նկատի է ունեցել հեղինակը: Ուստի «Մատեանի» թարգմանչի համար առավել կարևոր էր նկատի ունենալ համատեքստը:

«Մատեանի» ԻԲ գլխում Գ. Նարեկացին գրել է.

Ահա ես ինքն ինձէն կամաւորապէս **անձնամատն** եւ մարմնակործան[10]:

Ըստ Նոր Հայկազեան բառարանի՝ *«անձնամատն»* նշանակում է՝ «…մատնիչ անձին իւրոյ ի ձեռս օտարաց, վնասակար անձին և այլոց, ինքնակամ օտարացեալ»[11]: Գ. Նարեկացին հաճախ է անդրադարձել ոչ միայն մարմնի, այլև շատ ավելի կարևոր՝ հոգու կործանմանը, և նշված հատվածում նա ցանկացել է ասել, որ ինքն իր կամքով «*հոգեսպան և մարմնակործան»* է եղել: *«Անձնամատ»*-ը՝ *«հոգեսպան»* իմաստով է հասկացել նաև միջնադարյան մեկնիչը[12]: Մինչդեռ թարգմանիչները բնագրի բառը նույնությամբ են արտահայտել՝ ոչ մի կերպ հեղինակի ասելիքը հասկանալի չդարձնելով ընթերցողին.

Եվ այսպես, ահա, ես ինքս իմ դեմ եղա կամովին **անձնամատ** սաստիկ և մարմնակործան (Մ. Խերանյան, էջ 91),

Ահա կամովին ինքս իմ հանդեպ

Եղա **անձնամատն** ու մարմնակործան (Վ. Գևորգյան, էջ 129):

Այսպիսի օրինակի ենք հանդիպում նաև ԺԵ գլխում.

Յայտնեա՛ց վերստին եւ արդ գթութեանցդ **խորք**

Եւ բարերարութեանցդ հոսանք[13]:

---

[9] **Левый И.**, նշվ. աշխ., էջ 60:

[10] ՄՈ, էջ 329:

[11] Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հ. Ա, Ե., 1979, էջ 194 (այսուհետև՝ ՆԲՀԼ):

[12] Մաշտոցի անվան Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 5650, թ. 355 բ:

[13] ՄՈ, էջ 300:

Թարգմանիչները նշված հատվածում նույնպես կիրառել են բնագրային բառը.

Հայտնիր արդ և ի՛նձ գթությունդ **խոր** և բարիքներիդ հորդումներն առատ (Մ. Խերանյան, էջ 59),

Ցո՛ւյց տուր վերստին այժմ նաև ինձ

Խորքը գթությանդ ու բարերարման զեղումներդ հորդ (Վ. Գևորգյան, էջ 86):

Մինչդեռ եթե թարգմանիչներն ընդգծված բառն արտահայտեին այն իմաստով, ինչ նկատի է ունեցել հեղինակը և նաև այդպես է հասկացել միջնադարյան մեկնիչը՝ *«անբաւութիւն»*[14], կարող էին ավելի սպառիչ արտահայտել նրա ասելիքը: Հիշյալ տողերը մենք ինքներս փորձեցինք թարգմանել այնպես, ինչպես, կարծում ենք, նկատի է ունեցել Գ. Նարեկացին.

Հայտնիր արդ և ինձ գթությունդ *անբավ*,

Ցո՛ւյց տուր վերստին այժմ նաև ինձ *անբավությունը* գթությանդ:

բ) Երբ նույն բառը տարբեր հատվածներում տարբեր իմաստներով է կիրառվում.

«անձեռնհաս» բառը «Մատեանի» ԿԶ գլխում ունի երկու գործածություն՝

1. Առ ի շիջանել անընտրողաբար **յանձեռնհասն** բարձրութենէ[15]:

Նշված հատվածի «**յանձեռնհասն** բարձրութենէ» կապակցության մեջ ընդգծված բառն ունի *«գերազանց, վսեմական»* իմաստ[16].

Չիջնելու համար **անխոհեմ** կերպով իր բարձրությունից (Մ. Խերանյան, էջ 284),

Որ անմտորեն վայր չիջնի **անհաս** իր բարձրությունից (Վ. Գևորգյան, էջ 398):

2. Տե՛ս ի տարակոյս **անձեռնհաս** տագնապիս[17]:

Այս հատվածի «**անձեռնհաս** տագնապիս» կապակցության մեջ նշված բառը կիրառվել է արդեն *«անդարմանելի կամ անհնարաւոր նեղութեանս»* իմաստով[18].

Տե՛ս տարակուսական տագնապս **անձեռնհաս** (Մ. Խերանյան, էջ 284),

---

[14] ՄՄ 5650, թ. 350 բ:
[15] ՄՈ, էջ 507:
[16] **Աւետիքեան Գ.**, Նարեկլուծ, էջ 339, ծնթ. 7:
[17] ՄՈ, էջ 507:
[18] **Աւետիքեան Գ.**, Նարեկլուծ, էջ 339, ծնթ. 7:

Տե՛ս տագնապներն ու տվայտանքներն իմ **անդարմանելի** (Վ. Գևորգյան, էջ 399):

գ) Երբ բառը ճիշտ չի ներառվում հեղինակի հայացքների համակարգում.

Գ. Նարեկացին, ցանկանալով զսպել իր մտքի «*վայրագությունը*», գրել է.

Ընդոտնեա՛ ի սանձս կապոյ երասանաց ըմբռնման

Ջցնդեալ մտացս վայրագութիւն[19]:

«**Ընդոտնել**» նշանակում է՝ «1. ոտքի տակ տալ, ոտնակոխ անել, 2. արհամարհել»[20]: Ակնհայտ է, որ բառարանային թարգմանության դեպքում կստացվեր՝ «Արհամարհիր (ոտնակոխ արա) վայրագությունը ցնդած մտքերիս», որը չի համընկնում հեղինակի մտադրությանը: Թարգմանիչներն ըմբռնել են թարգմանվող բառի իմաստը համատեքստից, հեղինակի մտքից՝ այն թարգմանելով՝ մի դեպքում՝ «*զսպիր*», մյուս դեպքում՝ ավելի ազդեցիկ՝ «*նվաճիր, զսպիր*» բառերով.

Զսպիր ամրապինդ սանձահարումով վայրագությունը իմ ցնդած մտքի (Մ. Խերանյան, էջ 310),

Սանձ ու կապերով, երասաններով բռնած ամրապինդ՝

Նվաճիր, զսպիր վայրագությունը ցնդած մտքերիս (Վ. Գևորգյան, էջ 438):

2. Բնագրի մեկնաբանում

Ակնհայտ է դառնում, որ բնագրի ընկալման մեջ արդեն իսկ ներկա են նախնական հասկացման («կանխահասկացման»[21]) և մեկնության տարրեր: Գ. Նարեկացուն ճիշտ հասկանալու և թարգմանելու համար անհրաժեշտ էր վերականգնել ստեղծագործության իրական իմաստը: Այդ նպատակով թարգմանիչներն իրենց թարգմանություններում անդրադարձ են կատարել «Մատեանի» մեկնություններին՝ միջնադարյան լուծմունքին և Հ. Նալյանի ու Գ. Ավետիքյանի աշխատություններին, ինչպես նաև երբեմն ինքնուրույն հենց թարգմանության ընթացքում յուրովի մեկնություններ են իրականացրել:

Այսպես, Գ. Նարեկացին ԻԸ գլխում գրել է.

Քանզի ոչ **պիտակ** ինչ սոսկ զաւրութեանն ունի զմիւսմէն

---

[19] ՄՈ, էջ 532:

[20] **Մալխասեանց Ստ.**, Հայերէն բացատրական բառարան, հ. Երկրորդ, Ե., 1944, էջ 58, հմմտ. **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-Ձ, Ե., 1976, էջ 402:

[21] Ժամանակակից հերմենևտիկայի պատմության մեջ բազմաթիվ տեսաբաններ անդրադարձել են մեկնության խնդրակարգում անհրաժեշտ ներկա կանխահասկացման բաղադրիչին: Տե՛ս **Քոչարյան Ռ.**, Հանս-Գեորգ Գադամերի փիլիսոփայական հերմենևտիկան, Ե., 2006, էջ 103–110:

Առ մի խորհրդականն խորութեան[22]:

Հատվածի թարգմանության համար կարևոր է «*պիտակ*» բառի ճիշտ ընկալումը: Բառին տարբեր բացատրություններ են տրվել. նարեկացիագետներն այն հասկացել են՝ «աստվածային խորախորհուրդ միության մեջ Երրորդությունից մեկը մյուսից սոսկ զորության կարոտություն չունի»[23] իմաստով, միջնադարյան մեկնիչն այն ընկալել է «անուն» նշանակությամբ՝ «ոչ սոսկ և պիտակ այս է անուամբ միայն»[24]: Այդ իմաստով է հասկացել նաև Հ. Նալյանը[25]: Գ. Ավետիքյանի կարծիքով՝ «պետ» արմատից կազմված այդ գոյականը «Մատեանում» գործածված է «պետք, կարոտություն» առումով[26]: Չնայած որ վերջինիս բացատրությամբ է հասկացել և թարգմանել Մ. Խերանյանը, սակայն նա չի հասել այն բուն իմաստին, ինչ նկատի է ունեցել հեղինակը.

Քանզի խորախորհուրդ ձեր միության մեջ

Մեկդ մյուսի զորությանը **կարոտություն** չունի (Մ. Խերանյան, էջ 123):

Եվ միայն Վ. Գևորգյանը, «*կարոտության*» փոխարեն գրելով՝ «*խորթ, օտար*», հասել է իրական թարգմանության.

Չի խորախորհուրդ ձեր միության մեջ

Մեկդ մյուսից **խորթ, օտար** ինչ-որ զորություն չունի (Վ. Գևորգյան, էջ 174):

Թարգմանիչները, ինչպես արդեն վերը նշվեց, հաճախ հենց թարգմանության ընթացքում իրենք էին մեկնում հեղինակին, քանի որ «ավանդույթը պարզապես պահպանումը չէ, այլ հաղորդում (փոխանցում), փոխադրում»[27]: Եվ նրանք ձգտում էին հինը հասկանալ և արտահայտել նորովի: Այսպես, «Մատեանի» ԻԷ գլխում Գ. Նարեկացին իր «մոլությունը» շեշտելու համար գրել է, որ ինքը, անտեսելով հոգին, կատարել է մարմնի կամքը.

Մեղա՜յ **մարմնոյ ձեռն յոգի հարեալ**, յիմարս մեղայ[28]:

Գ. Ավետիքյանն ընդգծված արտահայտությունը մեկնել է հետևյալ կերպ՝ «Մարմնական գործովք զհոգիս սպանանելով կամ, մարմնական ձեռօք, այսինքն անմաքրապէս ի հոգևորս մերձենալով կամ այսպէս զատանել կետիւ

---

[22] ՄՈ, էջ 358:

[23] Նույն տեղում, էջ 1031–1032, ծնթ. 18:

[24] ՄՄ, 5650, թ. 366 ա:

[25] **Նալեան Յ.**, Գիրք մեկնութեան աղօթից Սրբոյն Գրիգորի Նարեկացւոյ, Կ. Պոլիս, 1745, էջ 213:

[26] **Աւետիքեան Գ.**, Նարեկլուծ, էջ 141, ծնթ. 29:

[27] Философская герменевтика Ганса Георга Гадамера (Актуальность прекрасного, М., 1991, с. 318).

[28] ՄՈ, էջ 350:

մեղայ մարմնոյ՝ ձեռնարկելով ի վնաս հոգւոյս քանզի մեղքն ո՛չ միայն հոգւոյն վնասէ, այլև մարմնոյ»[29]: Միջնադարյան մեկնիչը հիշյալ հատվածում *«ձեռն»* բառն ընկալել է իբրև մարմնի կամք, որը հոգուն մեղքեր է բարդում, ինչպես նաև մարդը ձեռքով հարվածում է կրծքին՝ «բռամբ զկուրծսն հարկանէ»՝ սիրտն ու հոգին համարելով «մայր և պատճառ մեղացն»[30]: Այս մեկնություններն համարելով անկատար՝ կապակցությանը տրվել են նաև այլ բացատրություններ՝ «մարմնի խնամք տանելով անտեսել ու սպանել հոգին, մարմնավոր մաքրությամբ հոգուն հաճոյանալ»[31]: Կարելի է ասել, որ սրանք Գ. Նարեկացու տողի ազատ վերաիմաստավորումներն են: Թարգմանիչներն ընդգծված հատվածը թարգմանել են այնպես, ինչպես իրենք են հասկացել՝ «*հանձնապաստան լինել, մարմնով հոգին մեռցնել»*.

Մեղա՜, որ եղա ես **հանձնապաստան**, հիմարս մեղա՜ (Մ. Խերանյան, էջ 114),

Մեղա՜ **մարմնապես՝ հոգիս եղծելով**,

Հիմարս մեղա՜ (Վ. Գևորգյան, էջ 160):

3. Բնագրի վերարտադրում

Ստեղծագործության հեղինակից պահանջվում է իրականության, իսկ թարգմանչից՝ բնագրի գեղարվեստական վերարտադրություն: Այստեղ է, որ թարգմանիչը հանդես է գալիս որպես բառաստեղծ և ոճաբան:

Ա. Գրիգոր Նարեկացին վերածննդի բանաստեղծ էր, հետևաբար լեզուն երանգավորելու և նոր բառերով հարստացնելու համար նա չէր դիմում օտար, մոռացված բառերի, այլ վերցնում էր դրանք իր ժամանակաշրջանից: Սակայն նրա կիրառած՝ գրաբարյան մտածողությանը հատուկ բառերն ու արտահայտությունները աշխարհաբարով նույնությամբ չէին կարող արտահայտվել: Դրանք աշխարհաբարով ներկայացնելու համար թարգմանիչներին անհրաժեշտ էր նախ ներթափանցել տվյալ ժամանակաշրջանի մտածողության մեջ՝ հասկանալու համար, թե ինչ է ցանկացել ասել հեղինակը, և նոր միայն դրանք վերարտադրել:

«Մատեանի» ԻՋ գլխում Գ. Նարեկացին գրել է.

Բարերարին շնորհաց արտասուաց պտուղ մատուցի,

Ձկորստեան խորս չափելով՝ զորքանն երբէք ոչ գտի,

---

[29] **Աւետիքեան Գ.**, Նարեկլուծ, էջ 131, ծնթ. 12:

[30] ՄՄ 5650, թ. 363 բ:

[31] **Նալեան Յ.**, նշվ. աշխ., էջ 196–197:

Մասնաւորաք բանիւք ի հանդէս նորին ջանացի[32]:

Այս տողերով հեղինակը ցանկացել է ասել, որ ինքը, շնորհաձիրին նոր արտասուքներ, այսինքն՝ զղջալով իր մեղքերի համար, դարձյալ իր անձի խորքերն է քննում, սակայն ինչքան էլ որ ջանում է լարել մտքերը, էությամբ դրան հասու չի դառնում: Այնուհետև, այս բովանդակությանը հաջորդել են հետևյալ տողերը.

«Զուշին պարտութիւն **յանվթարելեացն** բաժակ բարկութեան ի ձեռն իմ առին»[33]:

Այս հատվածում «**յանվթարելեացն**» բառը բացառականով ավելադրություն է՝ բնորոշ գրաբարին: «**Անվթարելի**» նշանակում է՝ «1. անեղծ, անվնասելի, անվտանգ, անվրեպ»[34], «2. առանց խանգարման, անխախտ, 3. առանց վնասի, անկորուստ, 4. անխախտ, անհողդողդ»[35]: Մեկնությունում այն բացատրված է՝ «... յանպակասելի և յանչափելի խորոցն մեղաց՝ առի ինձ նիւթ զայրացման ընդդէմ անձինս»[36]: Ինչպես տեսնում ենք, մեկնիչը ընդգծված բառն ընկալել է որպես փոխանուն և դրան ավելացրել «*մեղքեր*» որոշյալը: Այդպես է թարգմանել Մ. Խերանյանը.

Խորունկ մեղքերից խեյքըս պարտըված՝ բարկության բաժակն իմ ձեռքը առի (Մ. Խերանյան, էջ 110):

Մինչդեռ Վ. Գևորգյանի թարգմանությունը արտահայտել է հեղինակի ասելիքը.

Եվ պարտությունն իմ **բանականության**

Ձեռքս առա որպես բարկության բաժակ (Վ. Գևորգյան, էջ 155):

Բ. Գեղարվեստական ստեղծագործության առանձնահատկություններից է նորաբանությունների հարստությունը: Գ. Նարեկացին «Մատեանում» ստեղծել է բազմաթիվ նորակազմ բառեր, որոնք նոր են ոչ միայն ձևով, այլև իմաստով. հաճախ այդ նորաբանությունների իմաստից էր բխում ողջ հատվածի բովանդակությունը:

ա) Թարգմանիչները երբեմն նույնությամբ են արտահայտել դրանք.

Բարունակս ապականաբեր և **մահողկուզեան**[37]:

---

[32] ՄՈ, էջ 346:

[33] Նույն տեղում:

[34] ՆԲՀԼ, հ. Ա, էջ 241:

[35] **Աղայան Էդ.**, նշվ. աշխ., Ա–Զ, էջ 81:

[36] **Աւետիքեան Գ.**, Նարեկլուծ, էջ 125, ծնթ. 18:

[37] ՄՈ, էջ 272:

Նշված տողի ընդգծված բառը, որ Գ. Նարեկացու ստեղծածն է, գործածված է ընդհանրապես «թունավոր պտուղ տվող ծառերի համար»[38] իմաստով, այն ընկալել են իբրև ծառի որոշակի տեսակ, մահաբեր խաղող՝ «ասեն, թէ յեկպատան, որ է Աւմեդի, հայնց խաղող կայ, որ թէ մարդ ուտէ՝ մեռանի»[39]: Թարգմանիչները նույնությամբ են արտահայտել բնագրային բառը.

Բարունակս ապականաբեր և **մահողկուզյան** (Մ. Խերանյան, էջ 29),

Եվ բարունակս ապականաբեր ու **մահողկուզյան** (Վ. Գևորգյան, էջ 46),

բ) երբեմն թարգմանել են հոմանիշների միջոցով, որը՝

1. Մոտ էր բառի հիմնական իմաստին՝ առանձին վերցրած.

Հանապազասխալ տեսութիւն, ակնայայրատ պչրութիւն[40],

Մշտասխալ տեսողություն, ակնահայրատ պչրանք (Մ. Խերանյան, էջ 203),

2. Մոտ էր բառի՝ համատեքստում ունեցած իմաստին՝ «**Վաճառ մերձ ի յառ**, տաղաւար քակտելի»[41]: Հիշյալ տողում «*վաճառ մերձ ի յառ*» նշանակում է «ավարառության ենթակա վաճառք»: Սակայն այն ունի նաև մարդու կյանքի կարճատևության և անցողիկության իմաստ՝ «առ այնպիսի նման է կեանքս այս, որպէս թէ որ սկսանի առաւօտին շուկայ և վաճառ, և յերիկունն ի վեր առնուն զշուկայն և զվաճառն և այլ ոչ վաճառեն»[42].

Ավարի վաճառք, քանդելի տաղավար (Մ. Խերանյան, էջ 203),

Ավարառության ենթակա վաճառք, քանդվող տաղավար (Վ. Գևորգյան, էջ 281):

Մեկ այլ հատվածում Նարեկացին գրել է՝ «**Յոլովամեղձ ծուխ**, շոգի ցնդելի»[43]: «*Յոլովամեղձ*» նշանակում է «բազմաբիծ, աղտեղի, մրոտ»[44]: Թարգմանիչները թարգմանել են՝ «**Սաստիկ մրոտ ծուխ**, ցնդելի շոգի» (Մ. Խերանյան, էջ 203), «**Թանձրակուտակ ծուխ**, ցնդելի շոգի» (Վ. Գևորգյան, էջ 281),

3. Մոտ էր բառի ոճական գունապնակին՝ «Դժնէատեսիլ գոյն, **յոգնատխուր** գեղ»[45]՝ «Դժնատեսիլ գույն, **բազմատխուր** գեղ» (Վ. Գևորգյան, էջ 281),

[38] **Խաչատրյան Պ.**, Գրիգոր Նարեկացին և հայ միջնադարը, Ս. Էջմիածին, 1996, էջ 341:

[39] ՄՄ 5650, թ. 339ա:

[40] ՄՈ, էջ 435:

[41] Նույն տեղում:

[42] ՄՄ 5650, թ. 387բ:

[43] ՄՈ, էջ 345:

[44] ՆԲՀԼ, հ. Բ, Ե., 1981, էջ 367:

[45] ՄՈ, էջ 345:

4. Գրաբարյան բառը հաճախ փոխարինվել է աշխարհաբարի ոչ թե մեկ, այլ մի քանի բառով, որոնք իմաստով իրար մոտ են՝ «**Հանապազասխալ** տեսութիւն»[46]՝ «**Մշտասխալ ու թյուր** տեսողություն» (Վ. Գևորգյան, էջ 281):

գ) Թարգմանել են բազմիմաստի բացատրությամբ.

Քանզի յաւետ սխալեալ անկայ,

Իբրեւ **զողողակ** մթային ոչ ընտելական

Ի խաղբս մահու անզգայապէս[47]:

«Զողողակ» բառը, որ միայն «Մատեանում» է հանդիպում, տարբեր կերպ է բացատրվել՝ «լողացող»՝ «թէ՛ մարդ իցէ, և թէ ձուկն»[48], «ողողեալն ի խորս ջրոց»[49], «ջրի մեջ ողողված, լողացող, ջրի տակ սուզվող»[50]: Թարգմանիչները հետևել են Գ. Ավետիքյանի և Ստ. Մալխասյանցի բացատրությանը՝ թարգմանելով «*սուզակ*» և *«ջրասույզ»*.

Քանզի սխալվելով սաստիկ, ինչպես խավարին անընտել **սուզակ**,

Անզգայապես ես ինքս մահվան ծուղակը ընկա (Մ. Խերանյան, էջ 237),

Քանզի մի անփորձ, մթան անընտել **ջրասույզի** պես,

Սաստիկ մոլորված, չզգալով՝ ընկա ծուղակը մահվան (Վ. Գևորգյան, էջ 329):

Գ. Նարեկացու ստեղծած բառաբարդություններից է նաև *«քսփմնափուշ»* բառը.

Եւ յիշատակաւ հարման հեղուսիցն

Քստմնափուշ, տաժանատեսիլ ոգեպահանջից,

Որով պնդեցաւ միածինդ քո յաշտարակ խաչին[51]:

Բանաստեղծը, *«քսփմնափուշ»* ասելով, ակնարկել է այն բևեռները, որոնցով Միածնին գամել են «յաշտարակ խաչին», այսինքն՝ խաչափայտին[52]: Սակայն «*քսփմնափուշ*»-ը ոչ թե փոխանունություն է, հեղույս անվան տեղ գործածված գոյական, այլ ածական-մակդիր, որ վերաբերում է նույն՝ «*հեղույս*» գոյականի «*ոգեպահանջ*» լրացմանը: Միջնադարյան մեկնիչը «*քսփմնափուշ*»-ը բացատրել է՝ «սոսկալի փուշ. զբևեռքն ասէ հոգեկան»[53], որից պարզվել է Գ.

---

[46] Նույն տեղում:

[47] Նույն տեղում, էջ 464:

[48] **Աւետիքեան Գ.**, Նարեկլուծ, էջ 285, ծնթ. 10:

[49] ՆԲՀԼ, հ. Բ, էջ 508:

[50] **Մալխասեանց Ստ.**, նշվ. աշխ., հ. երրորդ, Ե., 1944, էջ 556:

[51] ՄՌ, էջ 358:

[52] **Նալեան Յ.,** նշվ. աշխ., էջ 208, հմմտ. ՄՄ 5650, թ. 366ա:

[53] ՄՄ 5650, թ. 366ա:

Նարեկացու խոսքի իրական իմաստը՝ Աստծու որդու խաչելությունը գալիս էր իր իսկ ոգու պահանջով՝ ոգեպահանջից, և որ այն ցավ էր ոչ թե մարմնի, այլ ոգու: Գ. Ավետիքյանը բառը հասկացել է ոչ ճիշտ՝ «քստմնեցուցիչ, փուշ-փուշ ընող (փշաքաղ անող)»[54] իմաստով, քանի որ բևեռի («զբևեռումն աստուածային մարմնոյ»[55]) առումով նախորդ տողում գործածված է «*հեղոյս*» (*հեղուսիցն*) բառը: Մ. Խերանյանը *«քստմնափուշ»*-ը նույնությամբ է թարգմանել, Վ. Գևորգյանը փոխարինել է այն *«սահմռկեցուցիչ, դժխեմ»* բառերով: Սակայն նրանք չեն պահպանել այս հատվածի թերևս ամենակարևոր՝ *«ոգեպահանջից»* բառը, ինչի հետևանքով էլ թուլացրել են հեղինակի ստեղծած իմաստի կարևորությունը.

Հիշելով հարվածները **քստմնափուշ**, ժանտատեսիլ և մահառիթ այն բևեռների,

Որոնցով գամվեց միածինը քո՝ խաչի աշտարակի վրա՝ թող չարը ցավի գա (Մ. Խերանյան, էջ 123),

Հիշատակելով այն տաժանատեսիլ,

Սահմռկեցուցիչ, դժխեմ, մահառիթ

Հեղուսահարման, որով բևեռվեց

Խաչ-աշտարակին միածինը քո (Վ. Գևորգյան, էջ 172):

Այսպիսի օրինակները «Մատեանում» բազմաթիվ են ու բազմազան, մենք անդրադարձանք դրանցից միայն մի քանիսին:

Այսպիսով, «Մատեան ողբերգութեան» երկի բառաշխարհը արտահայտելու համար թարգմանիչները հաճախ հեռացել են բնօրինակի բառացի իմաստներից, փոխհատուցել դրանք ձևի և բովանդակության այլ միջոցներով, երբեմն հեղինակի բառերն ու մտքերը նույնությամբ են փոխանցել կամ արտահայտել են դրանց աշխարհաբար համարժեքներով: Սակայն նրանք այնքան վարպետորեն են ստեղծել Գ. Նարեկացու բանաստեղծական բառին բնորոշ առանձնահատկությունները, որ «Մատեանը» հեղինակի ապրած ժամանակաշրջանից հազարամյակ անց էլ վերածնվել է գրեթե նույն ոգով և հանճարեղ գեղեցկությամբ:

---

[54] **Աւետիքեան Գ.**, Նարեկլուծ, էջ 141, ծնթ. 26:

[55] ՄՄ 5650, թ. 366 ա:

ON THE TRANSLATIONS OF THE “BOOK OF LAMENTATIONS” BY GRIGOR NAREKATSI INTO EASTERN ARMENIAN

APRESIAN A.

Summary

While translating the “Book of Lamentations” into Modern Armenian the translators have firstly taken into consideration the context and the author’s intention. However, when necessary, they introduced a novel stylistic layer into the work, artfully implementing other Modern Armenian lexical equivalents in the text of the translation.

К ВОПРОСУ О ПЕРЕВОДАХ «КНИГИ СКОРБНЫХ ПЕСНОПЕНИЙ» ГРИГОРА НАРЕКАЦИ НА ВОСТОЧНОАРМЯНСКИЙ ЯЗЫК

АПРЕСЯН А.

Резюме

При переводе «Книги скорбных песнопений» на современный армянский язык переводчики в первую очередь учитывали контекст и замысел автора, но при этом, в силу необходимости, вносили новый стилистический пласт, используя иные лексические эквиваленты современного армянского языка и делая это мастерски.

РАПОРТ ГЕНЕРАЛ-КОМИССАРА ТУРЕЦКОЙ АРМЕНИИ ГЕНЕРАЛА П. АВЕРЬЯНОВА ВРЕМЕННОМУ ПРАВИТЕЛЬСТВУ ОБ ОРГАНИЗАЦИИ МИЛИЦИИ В ЗАПАДНОЙ АРМЕНИИ

САAКЯН Р.
rubensahakyan58@gmail.com

Во время Первой мировой войны русская армия добилась больших успехов лишь на русско-турецком фронте. С весны 1915 г. по лето 1917 г. Кавказская армия нанесла ряд серьезных поражений османской армии. Русские войска заняли такие ключевые населенные пункты, как города Ван, Муш, Битлис, Эрзерум, портовый город Трапезунд и т. д. Турецкая армия была почти полностью разгромлена. Русские войска заняли большую часть Западной Армении. 7 мая 1915 г. командование Кавказской армии дало разрешение сформировать временное Ванское управление (губернаторство) во главе с Арамом Манукяном. В кратчайшие сроки были созданы органы власти и произведено административное деление губернии, беженцы стали возвращаться в свои населенные пункты, постепенно начала налаживаться жизнь. Однако в июле того же года Кавказская армия внезапно отступила, с нею вынуждено было покинуть Ван и армянское население. После повторного захвата Вана русскими войсками губернаторство не было восстановлено.

22 мая 1916 г. русским правительством было учреждено генерал-губернаторство Турецкой Армении и других областей Турции, занятых по праву

войны. Генерал-губернатором был назначен генерал-лейтенант Н. Пешков (22.05.1916 – 31.05.1917). Однако новые власти не спешили дать разрешение беженцам-армянам возвратиться на свои земли. Более того, русское правительство решило переселить русских во вновь завоеванные земли и не разрешало армянам-беженцам возвращаться в свои дома.

После Февральской революции 1917 г., когда на Кавказе было упразднено наместничество, новым правительством были сформированы органы власти. Руководство территориями, занятыми русскими войсками, было возложено на кадрового военного разведчика генерала П. Аверьянова.

Во время войны османским правительством был организован геноцид армян, и уцелевшая часть населения нуждалась в защите в особенности от курдских банд, которые нападали не только на армян, айсоров, но и на русские воинские части, тем самым дезорганизуя тыл армии. В ходе войны высшее командование Кавказской армии предприняло ряд шагов, чтобы курдские племена перешли на их сторону, но все попытки были безуспешными.

Генерал П. Аверьянов, отлично знавший регион, пытался обезопасить не только христианское население региона, но и тыл русской армии. Именно поэтому в своей докладной Временному правительству П. Аверьянов предлагал организовать областную и городскую милицию.

Докладная публикуется впервые, без сокращений. Нами сделаны некоторые грамматические и синтаксические правки, поскольку переписчик допустил ряд ошибок.

N 1
